ԺԸ· ՏԱՐԻ ԹԻՒ 4829 — 1901 ԴԵԿՏԵՄԲԵՐ 27/9 ՅՈՒՆՈՒԱՐ 1902 — ՀԻՆԳՇԱԲԹԻ — 29 ՌԱՄԱԶԱՆ 1319 — ԺԸ· ՏԱՐԻ ԹԻՒ 4829

درعلیهده غلطهده (آرهولك) غزتهسی ادارهخانهسنه

ՊՈԼԻՍ Ղալաթիա, Նորաշունկեան խան

Les annonces sont reçues
à la Direction du Journal "AREVELK„
Galata, CONSTANTINOPLE.

Նամակ կամ որ և է գրութիւն պէտք է ուղղել
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

20 ՓԱՐԱ

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԹԵՐԹ
Ազգային, Գրական և Քաղաքական

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ և գաւառներու համար	տարեկան	140	Ղր.
» » »	վեցամսեայ	70	»
» » »	եռամսեայ	40	»
Օտար երկիրներու համար	տարեկան	40	Ֆրնք.
» »	վեցամսեայ	20	»

Դրամի փոխարէն փոստայի փուլ կ'ընդունուի, 115 ղրուշի փուլը 100 ղրուշի հաշուով:

Յետգրեալ թղթատարի ծախքը բաժանորդաց կը վերաբերի:

Ծանուցմանց համար պէտք է դիմել ուղղակի խմբագրատունը:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈԳԻՆ
ԳԱՒԱՌԱՑ ՄԷՋ

Զանազան գաւառներէ հասած լրագրական թղթակցութիւնները կը տեղեկացնեն թէ այլեւայլ գաւառներու մէջ թաղային գործերու՝ կուսակցական ոգին սկսած է արծարծուիլ։ Թէպէտ սկզբունքով հակառակ չենք կուսակցութեանց գոյութեան թաղային գործերու մէջ, զի կրթական նախաձեռնութեան նշանակ ու միանգամայն յառաջդիմութեան տիպար կը համարինք կուսակցական ոգին, բայց գաւառական քաղաքներու և գիւղերու վրայ մեր ունեցած փորձառական ծանօթութեամբ պէտք է գիտնանք թէ ծայր տալ սկսող այժմու թեմական կուսակցութիւնները շինիչ ու բարոյացուցիչ տեսակէն չեն, հետեւաբար օգտակար ալ չեն կրնար ըլլալ, այլ բոլորովին հակառակ արդիւնք միայն կ'ունենան։

Եւ նախ հարկ է ըսել թէ գաւառական կուսակցութիւնները ընդհանրապէս այն տարիները ծնունդ կ'առնեն, երբ ժողովուրդին տնտեսական վիճակը բարգաւաճ է։ Չի բնական է թէ երբ ժողովուրդ մը իր ուտելու հացը միայն մտածելու հարկին տակ գտնուի, ոչ ալ ժամանակ և տրամադրութիւն չունենար ուղղակի իր հացին հետ առնչութիւն չունեցող դպրոցի և եկեղեցիի գործերով կամ խնդիրներով մտահոգ ըլլալու կամ զբաղելու։ Եւ այս տարի արժանաւոր առատութեան և աժանութեան շնորհիւ՝ որ կը տիրէ գրեթէ բոլոր գաւառներն ընդհանրապէս, տնտեսական կացութիւնը գոհացուցիչ ըլլալուն համար է որ կուսակցական ոգին կ'արծարծի տեղ տեղ, Վան, Տիարպէքիր, Խարբերդ եւն., ինչպէս կ'իմացուի հետզհետէ հասնող թղթակցութիւններէ։ Իսկ ուրիշ տեղեր զանց կ'ընենք յիշել։

Ուստի կարեւոր կը համարինք նկատել տալ մեր գաւառաբնակ ազգայիններուն թէ 1. Ցայժ վնասակար են կիրք ու ատելութիւն բորբոքել կուսակցական խնդիրներով, քանի որ քաջ համոզուած ենք թէ գաղափարի, հայեցակէտի, սկզբունքի տարբերութեանց ծնունդ չեն անոնք, այլ փոխադարձ հակառակութեան և անձնական թշնամութեանց։ 2. Թէ ո՛րքան որ կը վնասուին իրենք իւրաքանչիւրը իրենց տեղին մէջ զիրար դատափետող այդ տեղային կուսակցութեանց երեսէն, անկէ ոչ նուազ վնասով կ'ելլեն երբ մայրաքաղաքիս լրագրութեան կամ Պատրիարքարան կը դիմեն զիրար ամբաստանող և դատապարտող գրութիւններով կամ բողոքներով, որովհետեւ ոչ լրագրութիւնը կրնայ բան մը ընել և ո՛չ ալ Պատրիարքարանը կարող է իրենց պառակտումին դարման մը տանիլ, այլ ընդհակառակը երկուքն ալ ճիշդ հակառակ արդիւնքներ կ'արտադրեն իրենց միջամտութիւններուն, առաջինը՝ թեր ու դէմ հրատարակութիւններով կիրքերը աւելի բորբոքելէ տարբեր բան չծառայելով, վերջինը՝ կուսակցական վէճերուն լաւ իրազեկ չըլլալուն իր սովորական վերապահութիւններով։

Այս պատճառաւ ամէն գաւառացիք շատ աւելի խոհեմութիւն և իրենց շահերուն շատ աւելի գիտակցութիւն ունեցած կ'ըլլան, եթէ իրենց դպրոցի և եկեղեցիի վէճերը մէջերնին կարգադրեն։ Եւ եթէ օրինակով խօսիլ պէտք ըլլայ, դարձեալ այդ երեք հատը բաւական է, զի ահա 1.— Վան այդ երկու միջոցներուն դիմած ըլլալուն երեսէն Վարագայ որբանոցը վրայ տուաւ. —Նպաստ դադարումը այդ հաստատութեան փակումը ըսել է պարզապէս, ուրիշ ոչինչ. —2.—Խարբերդցիք դեռ մոռցած չեն անշուշտ թէ տարիներով ի՛նչեր փորձեցին այդ միեւնոյն երկու միջոցներուն դիմելով՝ առանց ո՛ և է օգուտ տեսնելու, մինչև որ իրենց բողոքներուն և ամբաստանութեանց առարկան, Պետրոս վարդապետը, որուն Պատրիարքարանը եպիսկոպոսացումն ալ արժան դատած էր, ինք՝ առերեսաբար, բարեհաճեցաւ հրաժարական տալ ինքնայօժար։ Իսկ այժմ որ իրենցմէ մէկ մասը սկսած է անոր յաջորդին, Եղնիկ վարդապետ Գալփաքճեանի դէմ ելլել և գուցէ առաջնորդին դէմ մեծ կուսակցութեան մը դուռը բանալ, թող ալ համոզուած ըլլան թէ ոչինչ պիտի օգտուին լրագրական հրատարակութիւններէ։ 3.—Տիարպէքիրցիները Տ. Եղնիկ վարդապետը Առաջնորդ ընտրելէ վերջ՝ երկպառակութեան ու հակառակութեան գրութիւններ տեղացնելէն ազգ. մարմնոյն խմբագրատուններուն և Պատրիարքարանի դիւանները՝ ոչինչ շահեցան կամ պիտի շահին, բայց եթէ առանց Առաջնորդի մնալ և այդ պատճառաւ վնասներ կրել նիւթական և բարոյական. զի կրնայ ըլլալ որ Տ. Եղնիկ վարդապետ վտարելով իրենց այդ վարմունքէն, վերջնապէս հրաժարի Տիարպէքիրի Առաջնորդութենէն։ Այդ պարագային, թող տպաւորեալ ըլլան Տիարպէքիրցիները թէ իրենց առանց Հովիւ մնալը իրենց պիտի մնայ, զի Պատրիարքարանը հարկադրուած, կրնայ միացնել իրենց թեմը շրջակայ ո՛ և է վիճակի մը, ինչպէս Ըրղանի, օրինակի համար, Բղիշ գաւառակը, զի կարելի չըլլալ եկեղեցական մը գտնել որ յօժարէ հոն երթալ իբր Առաջնորդ, Տեղապահ կամ Փոխանորդ։ Տիարպէքիրցիներն ալ թող չկարծեն թէ հնար պիտի ըլլայ գտնել իրենց համար աւելի բարեյաջող մէկը, զի յայտնի է թէ մեր եկեղեցականներուն ի՛նչ ողբալի աղքատութեան մէջ են։ Հետեւաբար ուրիշ վիճակ չսպասեն իրենց, բայց թէ ինչ որ պատահեցաւ Բղիշցիներուն և վերջերս ալ Բաղէշցիներուն, մինչև որ կարենան իրենց համար Հովիւ մը գտնել Առաջնորդ, Տեղապահ կամ Փոխանորդ (*)։

Նկատելով այս եղածները, շատ պէտք կ'ըլլան գաւառացիները, եթէ տիրող տնտեսական հանգստութենէն չչարաշահելով չփորձեն տեղային կուսակցական ոգին արծարծել, կիրքերը բորբոքել և ատելութիւն ու թշնամութիւն յարուցանել։ Վասն զի պէտք է գիտնան թէ վնասուողը իրենք միայն կ'ըլլան։

ՑՈՒՍԱԿ

(*) Բաղէշցիները իմացան անշուշտ թէ իրենց ընտրած Առաջնորդը, Վահան վարդապետ Ցակորեան, վերջնապէս հրաժարական տուած է այդ պաշտօնէն, քանի որ նախապէս համարած է Նոր Գիւղի եկեղեցիին քարոզչութիւնը, մանաւանդ որ Պանդերմայէն տրուած 3 հարիւր ոսկւոյ առնելիքը գանձելու յոյս չունենալ, ինչ որ պայման դրած էր Բաղէշի Առաջնորդութիւնը ստանձնելու համար։ Հիմա թող ընտրեն նոյնինքն, զո՛վ պիտի ընտրեն։

ՆՈՅՆ

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի մեր թղթակիցներէն եւ յօդուածագիրներէն որ իրենց ձեռագիրները թուղթին մէկ երեսին վրայ միայն գրեն, տպարանի աշխատութեանց դիւրութեան համար։

ԲՐՈՖ· ՄԱՌ ԵՒ ԵՐԳ ԵՐԳՈՑԸ

(Տար· Երէկի թիւէն եւ վերջ)

Գ. Ա. Մալխասեանցի յօդուածին մէջ ուշադրաւ են նաեւ սա տողերը.—«Բանն այն է որ Ժ. դարի ձեռագրում Վրացերէն լեզուով պահպանված Երգ Երգոցի մեկնութիւնը, ինչպէս Պրօֆ. Մառը յայտնում և ապացուցանում է՝ թարգմանութիւն է հայերէնից։ Բերենք մի կարևոր խօսքերից. «Վրացերէն բնագիրը թարգմանված է անտարակոյս հայերէնից և ոչ թէ անմիջապէս յունարէնից։ Սա երեւում է նախ և առաջ նրանից, որ Վրացերէն բնագրում պատահում են հայերէն բառեր, երբեմն այնպիսի բառեր, որոնք Վրացերէնում, նոյն իսկ հին յիշատակարաններում, ուրիշ անգամ չեն կրկնվում և որոնք միեւնոյն ժամանակ գտնվում են հայերէն լեզուով պահպանված Հիպողիտի մեկնութեան համապատասխան տեղերում։ Վրացերէն բնագրի հայ ծագումը երեւում է և մի քանի Վրացերէն լեզուին խորթ հայաբանութիւններից և երբեմն նկատվող նորանշան ընթերցուածներից։ Բերեմ մի բնորոշ օրինակ այսպիսի նորանշան Վրացերէն ընթերցուածքի։ Ասածին վերաբերվող «արեգական արդարութեան» խօսքը Վրացերէնում գրված է «արեգակ նոյն ինչ արդարութեան»։ Այս տարօրինակ դարձուածքում «նոյն ինչ» բառ երեւան գալը բացատրվում է նրանով, որ Վրացերէն բնագիրը կախում ունի հայերէնից։ Հայերէնում արեգակ բառը երկու ձեւ ունի—արեգ (կամ արեւ) և արեգակն։ Վերջին ձեւում «ակն»ը մասնիկ է. բայց միեւնոյն ժամանակ (հին) հայերէնում կայ և «ակն» բառը, որ նշանակում է աչք. և Վրացի թարգմանիչը «արեգակն» բառը անկասկած համարել է բարդ բառ, կազմված արեգ և ակն բառերից և սրանից է առաջ եկել Վրացերէնի նորանշան ընթերցուածքը «արեգականյին աչք արդարութեան»։ Այսպիսի հայաբանութիւններ ի դէպ առած, յատուկ են նաեւ Հիպողիտի միւս երկերի Վրացերէն թարգմանութեան։»

Բրօֆ. Մառ այս և սոյն նման լեզուական ու բառագննական փաստեր պարզելով ու առաջ բերած է իր հետազօտութեան շարունակութեան մէջ, որոնցմով կ'ապացուցանէ թէ Վրացերէն բնագիրը հայերէնէ թարգմանուած է։ Ասոնց կարգէն է իր առաջ բերած շարք մը հայաբանութիւնները՝ որոնք Վրացերէն բնագրին մէջ կան, այսինքն, հայերէնի ազդեցիկ Վրացերէն բառակազմութիւններ, համաձայնական ձեւեր, դարձուածքներ, յատուկ անուններու առտասանութիւններ, հայերէն արտասանութեան համաձայն։

Գ. Ա. Մալխասեանց հեղինակին այդ յօդուածը ինքն ալ պրպտած ու քննադատութեան բովէն անցնելով առաջ բերած է 73 այսօրինակ բառեր, որոնք հայերէնէն փոխ առնուած են կամ ընդհանուր ծագում ունին, և տեղ տեղ ալ աղաւաղուած են՝ հայերէն բնագրին միտքը չհասկցուելուն պատճառաւ։

Այս մասին Վրացի գրագէտներ առարկայս յայտնած են և Բրօֆ. Մառ հակառակ կարծիք կը յայտնէ, ըսելով թէ Երգ Երգոցի թարգմանութիւնը կատարուած է Հայոց և Վրաց կրօնական միութեան այն շրջանին, երբ հայերէն լեզուն ու Վրացերէն գրականութեան վրայ ազդեցութիւն ունեցած էր։ Բրօֆ. Մառի Հայ լեզուին ի նպաստ գրութիւնները առհասարակ չեն մոռցուած թէ՛ Հայ և թէ՛ Ռուս հանդէսներու մէջ և Երգ Երգոցի այս թարգմանութիւնը բոլոր առանց նորած է, թէեւ Վրաց համար անհաճոյ։

* * *

Վարդան վարդապետէն առաջ, Ժ. դարուն, Ս. Գրիգոր Նարեկացին ձեռնարկած է Երգ Երգոցի մեկնութեան, այնպէս որ Երգ Երգոցի մեկնութիւնը Նարեկացիին երկասիրութեանց մէջ ժամանակաւ առաջին համարուած է և փափագելի էր որ յարգելի Բրօֆ. Մառի հետազօտութեանց շարքին մէջ բաժին մը ունենար. մինչ Փրանսացի աստուածաբան Գուլիէլմոս Վիլֆառեա ըսած է թէ Երգ Երգոցի ընտիր մեկնութիւն մը ուրիշ ազգի մէջ տեսնուած չէ, թէեւ Նարեկացին այդ գործը համեստ յառաջաբանով մը սկսած է և շատ տեղեր ալ մեկնութեան համար Գրիգոր Նիւսացիին դիմել կը յանձնարարէ։

Նարեկացիէն երեք դար յետոյ ծագած է Վարդան վարդապետ՝ Երգ Երգոցի մեկնութեան շարադրիչը (ԺԳ. դար), որ Աղուանից աշխարհին սահմանակից մէկ տեղին մէջ ծնած, մանկութենէն աշակերտած է Վանական վարդապետին։ Զանազան վանքերու մէջ Թալով՝ աշխատալից գործեր ալ հաւաքած է. կեանքին վերջին օրերը Հաղբատայ վանքին մէջ անցուցած և հոն գրած է Երգ Երգոցի մեկնութիւնը, իրեն աշակերտակից Կիրակոս վարդապետին խնդրանքով, ուր սա ալ Նարեկացիին նման յառաջաբան մը ունի. «Որ և քում ըղձիցդ կցորդել հրամայեցեր ի բան և ի գիր, զնուաստ Տեառն աւելով շնորհօք նորա կարել մեզ զմեկնելն, որ է մեծն և աղբիւր առաջնորդութեամբ Արարչին, համառօտել և զԳրիգորին ի սկզբանէ, որ ի մեր գտանի քան զկարն մեր յայտ։»

Այժմ տեղն է հոս յիշել որ Ս. Գրքին մէջ բանաստեղծական վսեմ ոճով գրուած անհամեմատելի հատուածն է եղած Սողոմոնի Երգ Երգոցը։ Արդարեւ, դարեր անցած են յօրինուած է ան, բայց այս հովուերգական զմայլելի բանաստեղծութիւնը իր գեղեցկութիւնը պահած է և պիտի պահէ որչափ ատեն որ նորանոր դարերու բանաստեղծներ և աստուածաբաններ իրենց հմտութեան և ուսումնասիրութեան առարկայ ընեն զայն։ Սրբազան բանաստեղծութեանց շարքին մէջ երբ ամենէն գեղեցիկ նմոյշը կրնայ փայլիլ Երգ Երգոցը, ուր ժողովրդական շատ մը սիրերգութիւններ անոր հետեւողութիւնն ունին։

Ա. Տ. Մ.

ՏԻՎՐԻԿԻ ՎՐԱՅ ՆՕԹԵՐ

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔՆ ՈՒ ՈՐԲԱՆՈՑ-ՎԱՐԺԱՐԱՆԸ

Սեպտ. 1 շաբաթ երեկոյին պատրաստեցինք յաջորդ առտուն այցելութիւն մը տալ Լուսաւորչայ վանքին, որ կը գտնուի քաղաքին հիւսիս արեւելեան կողմը՝ երկու ժամ հեռաւորութեամբ։ Կանուխէն ուղի ելանք Տոքթ. Աւարով, փաստաբան Համբարձում էֆ. Պօղոսեան, գեղագործ Գ. Նշան Թանճուղեան և ես։ Բերկրանք քաղաքին առջեւ գետակին ալ եզրը, և արեւուն առաջին կարմրորակ ճառագայթներուն տակ, որոնք կ'ոսկեզօծէին բլուրներուն կատարները, առաւօտեան մաքուր ու զով օդին մէջ՝ որ նոր ոգեւորութիւն մը կը բերէ ուղեւորին։ Անցանք գետակի մը վրայէն, կտրեցինք ձորեր ու սարեր, փոքրիկ գիւղ մը և իր արտերը, նորէն դարեւանդներ ու սարահարթեր, ըրինք սոսկալի վայրէջք մը կողայ զառիվայրէ մը, և յետոյ ծայրաւոր ու դժուարին ճամբէ մը՝ ուղղուեցանք նոր ձորի մը մէջ, ուսկէ քալեցինք կէս ժամու չափ և տեսանք ըսին թէ հասանք վանքին հողերը։

Քիչ յետոյ՝ դառնալով անկիւն մը, երեւցան վանքին շէնքերը, որոնք հեռուէն գիւղի մը մենաստանի տպաւորութիւնը կը թողէին վրաս։ Խոր ու անձուկ հեղեղատի մը պաղուկ առուակին հեղասահ խոխոջին մէջէն, մէկ կողմէն վանքին պարտէզին ցանկերուն քսուելով, միւս կողմէն հանդիպակաց բլուրին լերկ կողերը քերելով, բարձրացող ծառերուն խիտ հովանիներուն մէջէն մոլորուած արեւուն շողերուն տակ դղրդացուած ճամբէ մը՝ ազդեցիկնաձեւ շրջան մը կ'ընենք եւ դառնալով կը հասնինք վանքին առջեւ։ Վանքին բնակիչները որոնք դիմացէն տեսած էին մեր անցքն ու լսած՝ երիվարներուն շառաչուն դոփիւնը ձորամէջէն քարերուն վրայ՝ ընդ առաջ փութացած էին, զոհունակ ու զուարթ երեւոյթով մը, տալով իրենց անձնօրհնակ ուրախ ու միօրինակ կեանքի առաջին ձանձրութիւնը՝ դալկահար դէմքերով։ Պօղոսեան էֆ. որ մէկն է վանքի և որբանոցի հոգ. անդամներէն, ուղղակի առաջնորդեց մեզ վանքին արտաքին դռնէն ներս, մինչ որբերուն բերնէն վրայ փափաք մը կար՝ անշուշտ գիտնալու համար թէ անծանօթ այցելուները ո՞վ են։

Ջերմը քալելու ասպարէզ, իսկ մենք հանգչեցանք վանքին ծայրի ամառնային մէկ սենեակը՝ որուն երկու կողմի պատուհաններէն մարդ չէ կշտանար այդ բարձունքէն դիտել ու դիտել շուրջն ու դէմը։ Հա՛ն աչքդ առջեւ կը պարզուի գեղեցիկ տեսարան մը։ Երեւակայեցէք փոքրիկ հովիտ մը շրջապատուած ամէն դին՝ ճիշդ Ալպեաց նման՝ լեռնակներով և բլուրներով, որ փակուելու համար վերջէն կը կարօտի միակ խուլի մը։ Այս լեռներուն ու բլուրներուն գագին մէջ կը բարձրանայ՝ մինչեւ 30 40 մեթր բարձրութեամբ մը։ Լեռներուն կողերը ընդհանրապէս ապառաժ ու կորդ են, շատ քիչ կը տեսնուին միակուռ ծառուններ ու կանաչներ. սակայն անոնց ստորոտը կան երկու առու, որոնք կ'եզերեն վարը գեղեցկացնելու, մեծցնել իրենց առուէ ջրերը։ Ամէն ինչ ժպիտ մը ունի հոն կարծես. բարակ հովին հնչառմանց, մաքուր ու անխառն օդը, ջինջ կապոյտ երկինքը, առատ ջուրը, կանաչ դալարիքը, լուռ ու պարզ մենաստանը, նուիրական վայրին ու առանձին խնկումը, աղօթ ու վանականին խաղաղիկ ու անմեղիկ կեանքը։ Եւ այս ամէնը միացած՝ մեծ հանգիստ մը կու տան ճամբու փոշիներու քրտինքէն ու աշխարհի ժխորէն պատուած մարդուն։

Ու այս գաղափարներուն մէջ պահ մը ծփուն ու մտածկոտ, կ'անդրադառնայի ակնարկ մը նետելու բազմահազար կեանքին ու պայքարին վրայ։ Այս մտածումով միայն կրնայինք արդարացնել հիներու նախընտրութիւնը՝ որով եռանդեալ կը քաշուէին վանքերը՝ հոն պարապելու համար այն վանդերը՝ որոնք հանճարեղութեամբ առաջ եկած էին կամ պիտի գային, հո՛ն ազատելու իրենց մարդասիրութիւնը՝ զիրենք Աստուծոյ նուիրելու կեանք առանցն տակ։ Ու հոս ակամայ միտքս կու գան քանի՛ քանի՛ հայ վանքեր՝ որոնք միմիայն ծառայած են մեծափառ վանահայրերու ու տաղանդաւոր վարդապետներու ու հաճոյքին, առանց խոհականութեան խղճմտանք պարարտ ու վառոյժ քաղցրին։

Քիչ մը ետքը, պոյդ պոյդ ներս մտան աղաքը։ Սկսան երգել քանի մը մանկական երգեր՝ փոքրիկ խմբոյկի մը ընկերակցութեամբ՝ զոր յաջողութեամբ կը զարնէր պզտիկ մը։ Երգերէն նորաշինն էր, բայց իրենց անդրին դէմքերը, որոնց վրայ կը կարդացուէին սնունդի անբաւականութեան կամ անխնամ կերակուրներու պակասութեան հետ միացած նաեւ պատուիրական խստութիւն մը, զուն զարծած էին մեղմել մանկական ու զըւարթութիւնը՝ հակառակ վանքին դիրքին ու օդին։ Այս պզտիկ նուագախումբին հետ՝ յարգելի տոքթորը իմաստալից խըրատական մը խօսեցաւ որբերուն, որոնց ուսուցիչը Գ. Փանոս Տիվրիկեան այն օր զարդ գնած էր իր ընտանիքին այցելելու։ Որբանոցի բացումէն ի վեր՝ առաջին անգամ ըլլալով՝ Տոքթորը անձնքն ալ քննեց, բայց շատ է ըսել որ 24 որբերէն կէսէն աւելին մէկ մէկ տեսակ դարմանելի հիւանդութիւն ունէին. գլխու ամէնուն համար ալ դեղագիր և խոստացաւ պարբերաբար այցելել և հսկել անոնց առողջութեան վրայ, հրահանգներ տալով այս մասին ներքին պաշտօնէութեան։ Որբերը իրենց սենեակները մեկնեցան և մենք գիւղական ճաշէ մը յետոյ՝ իջանք պատել վանքին զանազան մասերը։

Վանքը ունի բազմաթիւ սենեակներ ամրան և ձմրան յատուկ, հանտուրան, տախտա, գոմ, խոհանոց լուացարան, որբերու ննջարան, սեղանատուն, դասարան և ամէն ինչ որ պէտք է, հանգիստ շատ մը կահերով ու անկողիններով (*)։ Շէնքերը բաւական նոր, կանոնաւոր ու պատշաճ դիրքով են, միայն թէ հոս ու՛ հոն տեղ տեղ կը տեսնուի առանց պակասութիւն։ Արտաքին վրայ ունի կենդանիներու ընդարձակ առանձին մը՝ իբր զբօսավայր որբերուն։ Վանքը 3 յարկէ բաղկացած է եղեր. Երկու կողմի վրայ ունի պարտէզ մը և շուրջանակի իր վարուցանի հողերն ու արտերը, որոնցմէ հաւաքած են այս տարի 25 քիլէյի չափ ցորեն։

Մենաստանը հին ժամանակ կ'անուանուէր եղեր Կիւրղի անապատ, ուր կը գտնուի Լուսաւորչի մէկ մասունքը։ Ասոր արձանագրութիւնը չէնած է Ակնցի ոսկերիչ մը՝ ինչպէս կը հաստատէ իր վրայի 800 տարուան հնութիւն ունեցող յիշատակարանը։ Կիւրղի անապատը ունեցած է իր միաբանութիւնը, ճոխութիւնը և գրագիտան ուսումնարանը։ Քանիցս նորոգուած է. վերջին նորոգութիւնը կատարուած է 1840-44՝ Զէյթունցի Ցարութիւն եպիսկոպոսի Մխտարեանի վանահայրին օրով, որուն գերեզմանը կը գտնուի եկեղեցիին ձախ կողմը՝ դուրսի անկիւնը, ուր կան նաեւ իր նախորդներուն՝ Եղիազար վարդապետի և Մարտիրոս Ցարութիւն եպիսկոպոսի շիրիմները։ Ասոնց օրով ալ բաւական կարեւոր դիրք ունէր եղեր վանքը, մանաւանդ 1880ի տարիները՝ Սրբոցհամ եպիսկոպոս Մամիկոնեանի վանահայրութեան տակ։ Վերջին վանահայրն եղած է Բաղէշցի Մամբրէ Վ.՝ Առաջնորդ Տիվրիկի, 1896ին թողած ու քաշուած Սեբաստիոյ Ս. Նշան վանքը, և հոն մեռած։ Տաճարը երկու մատուռ ունի, մեծը՝ Ս. Աստուածածին և իրեն կից փոքր մը՝ Լուսաւորիչ անունով։ Անոնք քարաշէն են, ունին ոչ շատ եկեղեցական զարդեր, վարագոյրներ և պատկերներ՝ հին թուականներով։

Որբանոցը բացուած է 1898 մայիս 24ին՝ նախաձեռնութեամբ նախորդ առաջնորդ Գարեգին սարկաւագի —հիմա Գէորգ Վ. Ասլանեան՝ Առաջն. Տեղապահ Ակնայ— և օժանդակութեամբ ու հսկողութեամբ Տիվրիկցի քանի մը բարի ու գործօն անձերու, նախ 22 որբերով, որոնց թիւը հասցուած է 24ի։ Ծախքերը նախ հոգացուած են հանգանակութեամբ և պտղիով. ապա մէկ յետոյ Պատրիարքարանէն յատկացուած է երեք ամս. ոսկի ամսաթոշակ՝ որ 1899 նոյեմբերէն բարձրացած է 5ի՝ բարեխօսութեամբ Աւշարի Առաջնորդ Մաղաքիա վարդապետի։

(*) Վանքին դուրս իմացայ նաեւ որ հոն կան եղեր երեսունի մօտ ձեռագիր և 70ի չափ տպագրուած գրքեր, զորս չտեսայ դժբաղդաբար։

—)(67)(—

ԺԻՒԼ ՄԱՐԻ

ԱՐԳԻԼՈՒԱԾ ՊՏՈՒՂԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԺԵՐՈՄԻ ՊԱԶԱՐԻՆ ԱՂՈՒՈՐ ԱՂՋԻԿԸ

ԺԱ.

Ա Ղ Է Տ Ը

Ժամանակը կ'անցնէր ու Ժէրթիւարի մէկ անզգուշաբանութիւնը կրնար ամէն ինչ երեւան հանել. ուստի Ժան սկսաւ հետեւեալ նամակը գրել։

«Պէտք է որ ամէն օր տեսնեմ ձեզ, հոգ չէ թէ հենց վայրկեան ըլլայ։ Հեռաւորը, վաղը, կէս օրէն յետոյ, մինչեւ ժամը վեցը. ձեզի պիտի սպասեմ Լըբէք փողոցին ու Ծառուղիին միջեւ գտնուող փողոցին անկիւնը...»

Ժան այս անգամ հակիրճ կերպով գրեց իր նամակը, առանց բողոքի շնչին մը դնելու անոր մէջ։ Կը բաւականանար պարզ ժամադրութիւն մը տալ Ռէժինի, որպէս զի չհանդիպէր մէկէն ի մէկ։ Այդ պատճառաւ պզտիկցած էր սիրոյ բուռն խօսքեր գրելէ, իր բուռն նպատակը պղօղելու համար։

Ժէրթիւար նամակը յանձնեց մանկամարդ աղջկան, որ սա պատասխանը առաւ, մատիտով գրուած.

«Պիտի ջանամ գալ, բայց եթէ չկրնամ...»

—Աղէկով եմ թէ պիտի գայ, ըսաւ Ժան Վիլլարէ ուրախութեամբ սարսռուն, երբ Ռէժինին նամակը կարդաց։

Տենդոտ անհամբերութեամբ սպասեց Ռէժինի գալուն, ինչ որ չէր պատահած բնաւ։

—Այս աղջիկը խելայեղ կ'ընէ զիս, կը գոչէր Ժան։ Ասիկա ծանրակշիռ պարագայ մըն է։

Մերթ իր անգթութիւնը յաղթական հանդիսանալով, հեգնօրէն կը գոչէր.

—Այս ամէնը պիտի անցնի հարկաւ։

Բայց իսկոյն ամօթապարտ զգալով ինքզինքը, կ'աւելցնէր.

—Ո՛չ, ո՛չ, կը սիրե՛մ զայն։

Ժամանակ ճաշարան մը երթալով ճաշեց. կէս օրէն յետոյ Լըբէք ծառուղիին անկիւնը գտնուող սրճարանը գնաց, հոնկէ տեսնելու համար Ռէժինի գալը։

Ռէժին, այդ օրը, տխրօրէն չունէր բան ուտելու։ Ցերեկուան հաշիւն, անհանգստութիւն մը պատրուակելով իր սենեակը ելաւ։ Ռէժին և Մարթան հարսանեկան գնումներ կատարելու համար դուրս պիտի ելլէին, սակայն մանկամարդ աղջկան անհանգստութիւնը երկարելով, Մարթան առանձին դուրս ելաւ։

Ռէժին կը յուսար որ քոյրն ալ տունը չպիտի մնար, բայց այդպէս չեղաւ։ Արդէն կը զգար թէ իր քոյրը անշուշտ հսկողութիւն մը կը կատարէր իր վրայ, որով անկարելի պիտի ըլլար իրեն դուրս ելլել այդ օրը, հակառակ սքանչելի օդին։

Ժամը երկուքին առտեւները, Ռէժին աչքերը կիսափակ՝ փռուած էր մահճակալին վրայ, աւելի լաւ երազելու համար։ Մերթ կը մրմնջէր.

—Ժան հիմա ինծի կը սպասէ...

Ու կը հաշուէր ժամերը, կէս-ժամերը, նոյն իսկ վայրկեանները։ Անձկութիւն մը կը պատէր զինքը։

—Միթէ՛ չպիտի ձանձրանայ ինծի սպասելէն։ Եթէ առիթ ունենամ նոյն իսկ դուրս ելլելու իրիկուան դէմ, պիտի կրնա՞մ գտնել զինքը։

Ու միեւնոյն ատեն խուլ զայրոյթ մը կը զգար իր քրոջ դէմ, որ արգելք կ'ըլլար իր դուրս ելլելուն։ Զգաստեակ մը մղուած՝ պէս իսկոյն սենեակէն դուրս ելաւ, բոլոր ջիղերը թունդ ելած։ Վար իջաւ. Ռոզ ճաշասրահին մէջ կ'աշխատէր։

—Աղէ՞կ ես, սիրելի քոյրս։

—Այո՛... միայն թէ դեռ քիչ մը գլխու ծանրութիւն կայ վրաս։

Ռոզ անհուն խանդաղատանքով մը դիտեց իր քոյրը, ճակտին պաղութ պարտաւորելով ինքզինքը, անոր վրայ կասկածած ըլլալուն համար։ Կ'ուզէր այդ մասին ներքուստ խնդրել քրոջմէն։

Ռէժին ժամացոյցին նայեցաւ, որ երեքուկէս կը զարնէր։ Գիրք մը առաւ ձեռքը, յուզումը չմատնելու համար, բայց չկրցաւ կարդալ։ Ռոզ համբուրեց զայն ըսելով.

—Անո՞ր վրայ կը խորհիս։

Ռէժին բռնած ժպիտ մը ունեցաւ։

Այո՛, անոր վրայ կը խորհէր, բայց ո՛չ այն մարդուն վրայ, որուն կ'ակնարկէր Ռոզ։

—Պարտէզ երթամ, կարդալու համար։

—Իրաւունք ունիս... գնա՛, գործս լմնցուցածիս պէս ես ալ կու գամ։

—Ռէժին գլխարկը դրաւ, ինչ որ զարմացում պատճառեց քրոջը։ Ռէժին պարտէզ ելաւ, առանց որոշ ծրագիր մը ունենալու մտքին մէջ. սակայն ամէն բան աչքը առած էր։ Եղբօրորդի ծառի մը տակ նստաւ, որուն տակը շուք կ'ընէր։

Մանկամարդ աղջկան առանձին գլխանոց պարտէզին մէջ, առաւելութիւն մըն էր։ Ցերեկ ատեն կղպուած չէր ըլլար պարտէզին դուռը, ուրկէ պիտի կըրնար դուրս ելլել ու անհետանալ։ Հազիւ հազ քառորդի մը չափ պիտի բաւականէր ու յետոյ ետ պիտի դառնար վազելով։ Պատրուակ մը գտնելը շատ դիւրին բան մըն էր։

(Շարունակելի)

Հիմա թէ՛ որբերուն, թէ՛ իրենց ուսուցչի ամսաթոշակին և թէ վանքին աշխատաւորներուն տարեկան ծախքը կը հասնի 180 ոսկիի, 60ը՝ Պատրիարքարանէն և մնացեալը վանքին հասոյթներով՝ պտղէն ու հանգանակութեամբ։ Գարեգին սարկաւագ շատ խնամով վարած է իր պաշտօնը և հոգ տարած է ոչ միայն որբերուն մտաւորական ու ֆիզիքական զարգացումին, այլ եւ վանքին պայծառութեան։ 1500-2000ի չափ տնկած է նշենի, բարտի և ուռի, որոնց մեծ մասը այսօր՝ իր մեկնելէն յետոյ՝ քաշուած ու կոտրտուած են։ Գարեգին սարկաւագ՝ Գրիգոր քահանայի և իր որբանոցներուն պաշտօնէից հրաժարած կամ հրաժարեցուցուած է 1900 մայիսի մէջ։ Ներկայիս, վանքն ու որբանոցը Հ. գաբարձութեան ձեռքն է, որուն հին երկու անդամներուն՝ Նալպանտեան Թորոս և Գագանեան Կարապետ՝ ընկեր տուած են վերջերս երկուք ալ՝ Պօղոսեան ու Սուքիասեան Մկրտիչ էֆէնդիներ։

Իրիկուան, կը պատրաստուէինք հրաժեշտ տալ, և մինչ այս առթիւ քանի մը խօսք ալ ես կը պզուցէի սիրելի որբերուն, տանուտէր մէկը յորդանքով մը մօտեցաւ և յանձնեց ինծի նամակ մը՝ հասցնելու համար Գէորգ վարդապետի, իմանալով որ քիչ օրէն պիտի դառնամ Ակն։ Այս երախտագէտ զգացումը յուզեց ամէնքս ալ և վերջին անգամ բարովը ըսելէ յետոյ, հեծանք մեր երիվարները և այս անգամ փոխելով մեր ուղին՝ Նիրվանա ըսուած գիւղին աղէտէն ելանք Սեբաստիոյ խճուղին և անկէ ուղղակի դարձանք քաղաք, հաճոյալի օր մը անցուցած ըլլալու մխիթարութեամբ։

Հոս կը վերջացնեմ այս նօթերս՝ Տիվրիկցիներուն ներողութիւնը խնդրելով թերեւս ակամայ իրենց արժանապատուութիւնը վիրաւորած ըլլալուս համար։

Մ. Գ. Փ.

Ակն Կամրկապ

Քաղաքական Լուրեր

ԵՐՐԵԱԿ ԶԻՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Իտալիոյ արտաքին քաղաքականութիւնը.— Աւստրիոյ ու Գերմանիոյ լրագիրները.— Իտալիոյ նախարարութիւնը.— Հռոմի պաշտօնական շրջանակները.— Առեւտրական դաշնադրութիւնները։

Հռոմէն հետեւեալը կը գրեն Նոյէ Ֆրայէ Բրեսէ.— «Հոս ընդհանուր զարմացում պատճառած է Աւստրիոյ և Գերմանիոյ լրագիրներուն այն ընթացքը, որով ծուռ մեկնութիւններ կու տան Իտալիոյ արտաքին քաղաքականութեան մէջ տեղի ունեցած թեթեւ փոփոխութեան մը։ Իտալիոյ այն դիւանագէտներն իսկ՝ որոնք անձնական և կամ քաղաքական զանազան պատճառներով հակառակութիւն ունին նախարարապետ Պ. Ծանարտէլլիի և արտաքին գործոց նախարար Պ. Բրինէթթիի դէմ, կ'ըսեն թէ օտար լրագիրներուն կողմէ ցոյց տրուած անվստահութիւնը անիրաւ է և թէ այդ պարագան առաջ եկած է չափազանցութիւններէ ու ծուռ մեկնութիւններէ։ Այդ դիւանագէտները կը յարեն թէ Իտալիոյ արդի նախարարութիւնը այդ խնդրին մէջ բնաւ թերութիւն մը չէ գործած։ Նախկին նախարարապետ տը Ռուտինի և Պ. Սոննինօ ալ նոյն կարծիքը ունին։ Լրագրական ներկայացուցիչ մը հարցուցեր երեսփոխան Պ. Լուծծաթթիի թէ հաւանական կը նկատէ՞ որ Պ.Պ. Ծանարտէլլի ու Բրինէթթի պիտի ջանան, ներկայ պայմաններուն մէջ, վերանորոգել Երրեակ Զինակցութիւնը։ Պ. Լուծծաթթի պատասխաներ է թէ կատարելապէս վստահ է։ Պ. Լուծծաթթի թէեւ արտաքին գործոց նախարար Պ. Բրինէթթիի բարեկամը չէ, սակայն պարկեշտ ու խղճամիտ ըլլալուն համար, պարտաւորուած է այդպէս պատասխանել։ Արտաքին գործոց նախկին նախարար Վիսքոնթի Վէնոսթա մարքիզը, որ քանի մը օրէ ի վեր հոս կը գտնուի, միեւնոյն կերպով խօսեր է իր բարեկամներէն մէկ քանիին հետ, ըսելով որ Ծանարտէլլի դահլիճը թէ՛ երկրին շահերուն և թէ դաշնակից տէրութիւններու ակնկալութեանց համապատասխանող ընթացք մը կը հետեւի։ Հռոմի պաշտօնական կարեւոր շրջանակներուն մէջ սա լուրերը կան.— Աւստրիոյ ու Գերմանիոյ լրագիրները թէեւ կ'ըսեն թէ Իտալիա կը փափաքի օգտուիլ Գերմանիոյ մաքսային նոր սակացոյցին առաջ բերած անհամաձայնութենէն և թէ հիմակուընէ աւելի շահեր ապահովելու համար Երրեակ Զինակցութենէն բաժնուելու միտում ունի, սակայն այդ ըսուածները բոլորովին անհիմն են։ Իտալիա բնաւ երկիւղ մը չունի Գերմանիոյ մաքսային նոր սակացոյցին ընդունուելէն, որով երկու տէրութեանց մէջեւ եղած առեւտրական դաշնադրութիւնը պիտի վերանորոգուի։ Աւստրիոյ-Հունգարիոյ հետ առեւտրական դաշնադրութեան համար կատարուելիք բանակցութիւններուն առթիւ թէեւ աւելի մեծ դժուարութիւններ պիտի ծագին, սակայն Իտալիա ամէն կերպով պիտի ջանայ իր անկեղծութիւնը ցոյց տալ դաշնակից երկրին նկատմամբ, որով ոչ միայն առեւտրական դաշնադրութիւնները իրենց բնական վիճակը պիտի պահեն, այլ քաղաքական դաշնակցութիւնն ալ պիտի ամրապնդուի և նոր տրամադրութեանց համապատասխանող առեւտրական դաշնադրութիւն մը պիտի կնքուի։ Այս է ահա իրաց ճշմարիտ վիճակը։»

ՊԻՐՄԱՆԻՈՅ ՍԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՅ

Լորտ Քըրզընի ուղեւորութիւնը.— Ուղեւորի մը կարծիքը.— Թենկները.— Մանսուան հովիտը.— Երկաթուղիները։

Հնդկաստանի փոխարքայ Լորտ Քըրզըն, վերջերս ուղեւորութիւն մը կատարեց Պիրմանիոյ հիւսիսային կողմը և այդ առթիւ կարգ մը յայտարարութիւններ ըրաւ Զանի ու Քաչինի ժողովուրդներու ներկայացուցիչներուն։ Բարիզի թերթի մը թղթակիցը այդ առթիւ, հարցուց կարծիքը Պ. Ժագ Ֆօյի, որ երկար ուղեւորութիւն մը կատարելով ամբողջ հիւսիսային Չինէն անցած է և այցելած է Պիրմանիոյ հիւսիսային և արեւելեան կողմը գտնուող անկախ ժողովուրդները։ Պ. Ժագ Ֆօյի յայտարարութիւնը բաւական շահեկան պիտի ըլլար, վասն զի քանի տարիէ ի վեր հազիւ չորս Եւրոպացիներ կրցած են անցնիլ այդ տեղերէն։ Պ. Ժագ Ֆօյ յայտարարեց թէ իր և Մայրագոյն Արեւելքի բոլոր հիւպատոսներուն կարծիքին նայելով, Լորտ Քըրզըն նախապատրաստութեան և ամէնէն աւելի երկրախուզութեան ուղեւորութիւն մը կատարած է։ Անգլիացիները Թրանսվալի մէջ դառն փորձ մը կրելէն ազդուելով երկրի մը մէջ՝ որուն պաշտպանողական միջոցները ու զօրութիւնը պէտք եղածին պէս չէին գիտեր։ Զինուորական այն պայմանը զոր կը կարծէին կատարել, տրամաբանական կերպով երկարացաւ։ Ուստի, յարեց Պ. Ժագ Ֆօյ, Անգլիացիները խորհեցան թէ Պիրմանիոյ սահմանագլուխին վրայ որ և է գործի ձեռնարկելէ առաջ, խոհեմութիւնը կը պահանջէր տեսակ մը քննութիւն կատարել այն հոն ձեռնհաս մարդու մը կողմէ։ Պ. Ժագ Ֆօյ ըսաւ թէ Լորտ Քըրզընի յայտարարութիւնները նոր բան մը չեն յայտներ։ Յարեց թէ իր կատարած ուղեւորութիւնը շատ դժուար եղած էր տեղւոյն դիրքին և բնակիչներուն բարի կամք չունենալուն հետեւանքով։ Պ. Ժագ Ֆօյ քարտէսի վրայ ցոյց տալէ ետքը իր անցած տեղերը՝ Հայֆոնկ, Լաոքէյ, Մանհաօ, Մոնկ Զէ, Եուն Նան Սէն, Թալիֆու, Թէնկիւէ և Պամօ, յարեց թէ քառասունհինգ օրուան մէջ երեսունեօթ տեղ օթեւանած է։ Ուղեւորութիւնը շատ դժուար եղած էր, վասն զի պարտաւորուեր է ոչ միայն 150 մեթր լայնութիւն ունեցող գետերէ, անդնդախոր դաշտերէ (Մանսուան Հովիտը կը կոչեն Սալուէնի հովիտը) անցնելու և մինչեւ 2000 մեթր բարձրութեամբ լեռներէ մագլցելու, այլ ամէնէն մեծ արգելքը եղեր է Եուն-Նանի մէջ Չինացիներու ատելութիւնը Եւրոպացիներուն դէմ, ով որ ալ ըլլայ։ Մանտարինները խնդրանօք, որոնք գիտէին թէ պիտի չկրնային զսպել ժողովուրդը, Պ. Ժագ Ֆօյ չէ կրցեր քաղաքներուն մէջ մնալ և լեռներու վրայ պառկեր է։ Թէնկիւէի մէջ մանտարինները արտօներ են զայն քաղաք մտնել, բայց պայմանով որ զօրանոցէն պիտի չելլէ, ուր հինգ հարիւրէ աւելի զինուորներու հսկողութեան ենթարկուեր է։ Մանտարիններու խնդրանօք իր մեկնումը կատարեր է կէս գիշերէն չորս ժամ վերջը, վասն զի Չինացիները տակաւին ափիոնի ազդեցութեան տակ կը գտնուէին այդ ժամուն։ Պ. Ժագ Ֆօյի ուղեւորութեան նպատակը աշխարհագրական ուսումնասիրութիւններ ըլլալով, թղթակիցը հարցուց թէ ի՛նչ էր իր կարծիքը Անգլիացիներուն ծրագրին վրայ։ Պ. Ժագ Ֆօյ պատասխանեց.

«Անգլիացիները պիտի չկրնան այդ կողմերը երկաթուղի մը հաստատել սա երեք պատճառներով.— Նախ, եւրոպական զինուոր չունին, վասն զի չեն կրնար վստահիլ հնդիկ զինուորներուն վրայ, որոնք այդ սահմանագլուխին երկայնքը շարուած են. անոնց մէջ կարգապահութիւնը պահելու համար մեծ դժուարութիւն կը քաշեն։ Հնդիկ զինուորներէն անոնք որ կրնան պատերազմիլ, Հարաւային Ափրիկէ ղրկուած են։ Երկրորդ, Անգլիացիները բնաւ ժողովրդականութիւն չեն վայելեր անկախ իշխանապետութեանց մէջ։ Ամէն անգամ կ'իմացուի որ քանի մը խումբեր բրիտանական երկիրները արշաւեր և թղթատարներ կողոպտեր են։ Պէտք է գիտնալ թէ անոնք լեռնական ժողովուրդներ են՝ վերջին դրութեամբ ամերիկեան հրացաններով զինուած։ Երրորդ՝ ամէնէն կարեւոր կէտը Միթչինայէն կամ Բանլոնֆերին անդին երկիրը այնքան բնական դժուարութիւններ ունի որ Անգլիացիները գրեթէ պիտի չկրնան իրենց երկաթուղիի գիծերը երկարել։ Կան խիստ բարձր լեռներու զուգահեռական շարքերը և խիստ ընդարձակ գետեր։ Մասնագէտ մը ըլլալու պէտք չկայ ըսելու համար թէ այդ տեղը շինուելիք երկաթուղի մը շատ սուղ պիտի ըլլայ՝ բազմաթիւ թունելներու, կամուրջներու եւլն. առթիւ ահագին ծախքերով։ Գործաւոր գտնելն ալ դիւրին բան մը պիտի չըլլայ։»

Ասոնք են այն դժուարութիւնները որոնց պիտի հանդիպին Անգլիացիները, բայց յայտնի է թէ Անգլիացիները այնքան դիւրին հոս չեն կենար իրենց օգտակար համարուած ծրագիր մը։ Հետեւաբար ուրիշ միջոց չէ որ մէկ կողմ կը թողուն Ձէ-Զուանի ամբողջ վաճառականութիւնը Պիրմանիայէն անցնելու գաղափարը։ Բարիզի թերթին թղթակիցը կը յարէ թէ Անգլիացիները կրնան նորէն ձեռք առնել այդ ծրագիրը. իրաւ է որ հաւատացած են թէ Հնդկաչինու կուսակալին կորովի քաղաքականութեանը. Եուն Նանի արեւելեան մասին մէջ բնական դժուարութեանց չգոյութեանը և Ֆրանսացիներուն մինչեւ այսօր վայելած ժողովրդականութեան շնորհիւ, Ֆրանսա բոլորովին բացառիկ դիրք մը ունի հոն. սակայն, կ'ըսէ բարիզեան թղթակիցը, անկէ պատճառ մը չէ որ Ֆրանսա խաբուսիկ ապահովութեան մը մէջ քնանայ։

ԹՐԱՆՍՎԱԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գերմանիոյ մեծ սպայակոյտին կարծիքը Թրանսվալի պատերազմին վրայ.— Պօէրներուն կռուելու եղանակը.— Լորտ Միլներ.— Համիլթըն զօրավար։

Գերմանիոյ մեծ սպայակոյտը կարծիք յայտնելով Թրանսվալի պատերազմին վրայ, նախ խօսելէ կը քննադատէ Պօէրներու այն անգործ պաշտպանողական ընթացքը զոր՝ ցոյց տուին պատերազմին առաջին շրջանին մէջ։ Կը մեղադրէ Պօէրները թէ ծանր սխալ մը գործած են, իրենց զինուորներուն գրեթէ ամբողջութիւնը անգործութեան մատնելով, Լէտիսմիթը ու Մէյֆէքինկը պաշարելու համար, քանի որ հարկ եղած գործիքները չունէին պաշարումի պատերազմին համար։ Գերմանիոյ սպայակոյտը կը մեղադրէ Լորտ Բիւլէրը թէ չափազանց ցրուած է իր զինուորները։ Անգլիացիները Բրէթորիան առնել ուզելով, պարտաւորուեցան, մայրաքաղաքը իրենց գործողութեանց կեդրոնին կապող երկաթուղիի գիծը պաշտպանելու համար, իրենց զինուորներուն մեծ մասը պահպանութեան յատկացնել։ Միւս կողմէ անգլիական տրամադրելի զինուորներուն թիւը անբաւական է։ Նաեւ անոնք մեծ տարածութեան մը վրայ ցրուած ըլլալով դիւրին զոհ մը կ'ըլլան Պօէրներուն համար։ Անգլիացիները, անձնասիրութեան տեսակէտով պիտի չթողուն Բրէթորիան, վասն զի եթէ անկէ հեռանան, այդ պարագան պարտութիւն մը պիտի նկատուի հանրային կարծիքին կողմէ։ Այդ պարագային մէջ պատերազմը մշտնջենական պիտի ըլլայ։ Անգլիացիները ի զուր իրենց պիտի սորվին թէ բաւական չէ աշխարհագրական նպատակէ մը տէրը ըլլալ և թէ թշնամիին մայրաքաղաքին առնումը անարժէք է, որչափ ատեն որ, դուրսը զօրախումբերը շարունակեն պատերազմը։

—Բարեյոյսի գաղթավայրէն կը հեռագրեն թէ Քալվինիայի ճամբուն վրայ անգլիական փոխադրախումբ մը դէմ կատարուած յարձակումին առեն Պօէրները՝ եօթը հարիւր հոգի՝ երբ յարձակում կը կատարէին, 250 [illegible] անոնց ձեռքը բռնած էին։

—Անգլիոյ պատերազմական նախարարութիւնը, ուրբաթ իրիկուն, Լորտ Միլներէն հեռագիր մը ստացաւ ընթացիկ գործերու վրայ, ինչ որ բոլորովին կը հերքէ անոր մեռած ըլլալու մասին շրջած զրոյցները։

—Լորտ Քիչնէր կը հեռագրէ Եօհաննէսպուրկէն թէ Համիլթըն զօրավարին զինուորները, դեկտ. 29էն ի վեր, Էրմելոյի արեւելեան կողմը հարիւրի չափ Պօէրներ գերի բռներ են, որոնց մէջ կը գտնուի Էրասմուս հրամանատարը։ Անգլիացիները նաեւ մեծաքանակ աւար ու սայլ գրաւեր են։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ազատական կուսակցութիւնը.— Լորտ Ռոզպէրիի ճառախօսութիւնը ու քաղաքականութիւնը.— Լրագիրներու կարծիքը.— Ազատական արմատական կուսակցութիւններ.— Լորտ Ռոզպէրի եւ Սըր Հէնրի Քէմպըլ Պէնըրման։

Լոնտոն, 31 դեկտ.— Այսօր, հոս խօսակցութեան առարկայ դարձած են Լորտ Ռոզպէրիի խօսած ճառը Չէսթըրֆիլտի մէջ ու անոր ունենալիք հետեւանքները։ Գաւառական լրագիրներու երկու թղթակիցներ ծանուցին թէ Լորտ Ռոզպէրի մերժած էր միանալ Սըր Հէնրի Քէմպըլ Պէնըրմէնի, ազատական կուսակցութիւնը վարելու համար և թէ անկախ դիրք մը պիտի բռնէ։ Սակայն Տէյլի Նիւզ կ'իմանայ թէ Լորտ Ռոզպէրի որոշած է չխառնակել ազատական կուսակցութեան, թէ՛ Լորտերու Ժողովին մէջ և թէ այլուր։ Նաեւ մտադիր չէ ազդել իր յաջորդներուն։ Միւս կողմէ, Տէյլի Քրոնիքլ կը կարծէ թէ իրողութիւնը այդպէս չէ, ըսելով թէ Լորտ Ռոզպէրի Չէսթըրֆիլտի մէջ պարզած է այն քաղաքականութիւնը, որ իր կարծիքով, կրնայ վերականգնել ազատական կուսակցութիւնը։ Եթէ երբեք Սըր Հէնրի Քէմպըլ Պէնըրման չընդունի այդ քաղաքականութիւնը, ինք, Լորտ Ռոզպէրի չպիտի դադրի ջատագովելէ զայն ու մինչ պիտի պաշտպանէ երկրին առջեւ, նախապէս վստահ ըլլալով թէ այն ամէն ազատականները, որոնք իրեն պէս կը խորհին, պիտի միանան։ Այսպէս, ազատական կուսակցութիւնը պառակտուած վիճակ մը ունի։ Յանցանքը Լորտ Ռոզպէրիինն է, կ'ըսէ Տէյլի Նիւզ, սակայն Տէյլի Քրոնիքլ ալ Սըր Հէնրի Քէմպըլ Պէնըրմէնի կը վերագրէ բոլոր յանցանքը։ Երկու լրագիրներն ալ թերեւս իրաւունք չունին։ Եթէ երբեք Սըր Հէնրի Քէմպըլ Պէնըրման համաձայն չէ գտնուած Լորտ Ռոզպէրիի քաղաքականութեան, հետեւաբար պատճառը սա է որ պարտաւորուած ըլլալով հետեւիլ արմատականներուն, որոնց պետն է, Սըր Հէնրի Քէմպըլ Պէնըրմէն չէ համարձակած որոշում մը տալ։ Այդպիսի որոշում մը պիտի կրնար թէ փրկել արմատական կուսակցութիւնը և թէ՛ անոր ամբողջական քայքայման պատճառ ըլլալ, նկատի առնելով արմատականներուն բաժան ընթացքը։ Լորտ Ռոզպէրիի քաղաքականութիւնն է բանակցութիւններ կատարել Պ. Քրիւկէրի հետ, ընդհանուր ներում մը տալ Պօէրներուն և այրած ագարակները վերաշինել։ Այս քաղաքականութիւնը, որ քաջալերում կը նշանակէր Պ. Չէմպըրլէնի քաղաքականութեան, այս անակնկալով, շատ ընդունելի էր արմատականներուն համար, որովհետեւ առաջարկուած բանակցութիւնները պիտի կատարուէին Եւրոպայի մէջ, ուր կը գտնուէր Պ. Քրիւկէր։ Այս վերջինը բանակցութեան պիտի մտնէր Լոնտոնի պաշտօնական պաշտօնէից հետ, որով Պ. Չէմպըրլէն և Լորտ Միլնէր չպիտի կրնային դեր խաղալ բանակցութեանց մէջ։ Բայց արմատականները կէտ մը վրայ համամիտ չէին նախկին նախարարապետին, երբ անիկա վերջացնելով կը հրաժարէր Իռլանտայի ծրագրէն և երկրակալութեան կուսակից կը հաշուէր ինքզինքը։

Ակներեւ է թէ, երկու տարիէ ի վեր, քանիցս գիտուեցաւ որ անգլիական ժողովուրդին մեծամասնութիւնը եթէ ոչ հայրենամոլ, գէթ երկրակալութեան ջերմ կուսակից է։ 1897էն ի վեր այդ զգացումներով տոգորուած է անգլիական ժողովուրդը, որ գիտակցութիւն ունեցաւ իր երկրին զօրութեան ու ընդարձակութեան, երբ Վիքթորիա թագուհիին երկրորդ յոբելեանին առթիւ փայլուն հանդէսներ սարքուեցան։ Առաջ, կուսակցութիւնները, ազատական թէ պահպանողական, ամէն բանէ առաջ անգլիական էին, բայց հիմա պարտին երկրակալութեան կուսակից ըլլալ։ Արմատականները միշտ հակառակ եղած են ու մինչեւ այսօր են այդ գաղափարին հանդէպ. արմատականներուն համար, որոնք կլատսթոնեան վարդապետութեամբ և Պրայթի ու Կոպտընի գաղափարներով տոգորուած են, երկրակալութիւնը համանիշ է հայրենամոլութեան ու յարձակողական կուսակցութեան։ Անոնք կը պնդեն թէ այդ երկու բաները անբաժան են իրարմէ։ Թերեւս իրաւունք ունին։ Բայց քաղաքականութեան մէջ պէտք է նկատողութեան առնել իրողութիւնները, և հիմակուան իրողութիւնն ալ սա է թէ անգլիական ժողովուրդը երկրակալութեան կուսակից է։ Արմատականները, անտարակոյս, չեն ուրանար այդ կէտը, բայց կ'ըսեն թէ երկրակալութեան զգացումը վաղանցիկ է և թէ Անգլիացիք նորէն պիտի ընդգրկեն երբեմնի ազատական-արմատական վարդապետութիւնը։ Ահա՛ այս պատճառաւ չեն ուզեր պատասխանել Լորտ Ռոզպէրիի կոչին, զոր իբր պետ չեն ուզեր ընդունիլ։ Նաեւ Սըր Հէնրի Քէմպըլ Պէնըրմէն կ'առաջարկեն իրենց կուսակցութեան պետը մնալու, առանց որ և է դիրք բռնելու Լորտ Ռոզպէրիի։ Գալով Լորտ Ռոզպէրիի իր առաջարկը սա է.— Ազատական կուսակցութեան պետ եղած ատեն, իր բարձր իմացականութեամբ և քաղաքական ու դիւանագիտական ներհուն հմտութեամբ օգտակար ծառայութիւններ մատուցած է անոր։ Իր ձեռնհասութեան սահմանին մէջ ամէն ինչ ըրած է ազատական կուսակցութեան յառաջդիմութեան համար։ Սակայն իր պաշտօնակիցները նոյնքան փութկոտութեամբ չեն աջակցած իրեն։ Նոյն իսկ գտնուած են անոնցմէ ոմանք, որոնք յարձակում գործած են իր վրայ։ Լորտ Ռոզպէրի հրաժարական տուած օրը դիտել տուաւ որ իր պարտականութիւնը հանդէպ կուսակցութեան կատարելէ յետոյ, այս վերջինը զանցառու գտնուած էր։ Քանի մը օր առաջ, Չէսթըրֆիլտի մէջ խօսելու հրաւիրուելով, Լորտ Ռոզպէրի ըսաւ թէ, առանձնակի պաշտօն մը կը խոստանար աջակցիլ թէ՛ իր խօսքով և թէ իր գաղափարներով։ Պարզեց այն քաղաքականութիւնը, զոր լաւագոյն կը նկատէ, ո՛չ միայն ազատական, այլ և ազգային տեսակէտով։ Արմատականները չեն ընդունիր Լորտ Ռոզպէրին, բայց անիկա, իբր պետական անկախ անձնաւորութիւն մը, Լորտերու Ժողովին մէջ պիտի պաշտպանէ իր գաղափարները։ Հիմա կը մնայ միայն գիտնալ թէ պիտի՞ կրնայ բաւականաչափ կուսակիցներ գտնել ազատականներուն մէջ, կեդրոնի կուսակցութիւն մը կազմելու համար, եթէ ոչ արմատական-ազատական հին աւանդութիւնը յաղթական պիտի ելլէ։ Արդի ազատական կուսակցութիւնը կը փարեն մէկ քանի հոգիներ, մանաւանդ քաղաքական ընկերակցութիւններ, որոնք աւելի հաւատարիմ մնացած են աւանդութեան քան թէ Պ. Կլատսթոնի քաղաքականութեան։ Թէեւ այս վերջինը քաղաքականութիւն մը չէ ձգած, սակայն գրգիռ ուժը կայ, որ տակաւին չէ մարած և կրնայ աւելի։ Ազատական կուսակցութիւնը այն ատեն միայն պիտի կրնայ կազմակերպուիլ, երբ նոր անձեր ու նոր մեթոտներ գան բռնելու հիներուն տեղ, որոնք իրենց ստացած ուժին շնորհիւ միայն կը գործեն։

ՖՐԱՆՍԱ

Մոնսենեէօր Լորէնցէլլիի ճառին առթիւ.— Ֆրանսայի դիրքը աշխարհի մէջ.— Արտաքին քաղաքականութիւնը։

Թան խօսելով այն ճառին վրայ զոր Բարիզի պապական նուիրակը՝ իբրեւ երէց անդամ դեսպանական մարմինի՝ Էլիզէի պալատին մէջ, խօսեցաւ տարեգլուխի առթիւ (ինչպէս հրատարակեցինք առջի օրը) դիտել կու տայ թէ մօնսէնեէօր Լորէնցէլլի գործածած լեզուին համար զարմացողները կամ զայրացողները անոնք են որ չեն ուզեր ըմբռնել թէ Ֆրանսայի իրական դիրքը ի՛նչ է Եւրոպայի հանդէպ։ Թան կը յարէ.— «Ասոնք իրենց փոքր կիրքերուն և կուսակցական ոգիին բերմամբ այնպէս կ'երեւակայեն թէ աշխարհ ալ մասնակից է իրենց կռուութեանց և կամ ատելութեանց։ Պէտք է գիտնալ թէ աշխարհ բոլորովին անտարբեր է մեր ներքին կռիւներուն։ Երկու բան միայն կը շահագրգռէ զայն. Ֆրանսա մնաց այն մեծ ազգն է, ի՛նչպէս ցոյց կու տայ առիթ և ի՛նչպէս կը գործածէ իր միջոցները ու զօրութիւնը։ Առաջին կէտին համար հասկնալու բան մը չկայ՝ փոխադարձ բարեկամութեան և ակնածանական հաւատարմութեան այն ցոյցերն եղաւ՝ որոնք տեղի ունեցան Ռուսիոյ կայսեր վերջին ուղեւորութեանը պահուն։ Այդ ցոյցերը տարեգլխին ալ կրկնուեցան՝ Զարին և Հանրապետութեան նախագահին մէջեւ փոխանակուած սիրալիր հեռագիրներով։ Հիմա ինչ որ կ'ըսուի Ֆրանսայի դերքին, Իտալիոյ հետ մեր ունեցած յարաբերութեանց համար, և ինչ որ կ'ըսեն անգլիական լրագիրները՝ Անգլիոյ և Ռուսիոյ մէջեւ համաձայնութեան մը կարելիութեանը վրայ, առանց ամէնքն ալ, ինչպէս նաեւ ուրիշ պարագաներ ցոյց կու տան թէ Ֆրանսա քաղաքական կերպով մոլորեալ կէտ մը Ֆրանսացիներու միտքին մէջ միայն կ'ըլլայ, որոնց թիւը բարեբախտաբար հետզհետէ կը պակսի։ Բոլոր այդ պարագաները և ուրիշներ ալ բաւական երկար ատենէ ի վեր ցոյց կու տան թէ Ֆրանսա Եւրոպայի մէջ լաւ տեղով չէ նայուիր։ Մ. Լորէնցէլլիի ճառը, բոլոր դեսպաններուն ներկայութեանը, կը հաստատէ այդ իրողութիւնը։ Հանրապետութեան նախագահը գոհունակութեամբ օգտուեցաւ առիթէն, վճռական լեզու մը գործածելու, փոխանակ սովորական ու պաշտօնական շնորհաւորութեանց։ Եկեղեցիին բարձրաստիճան ներկայացուցիչները անշուշտ գաւեցան մեր ներքին քաղաքականութեան վերջին կարգ մը դէպքերուն վրայ, բայց ինչ որ կ'ըսեն մեր արտաքին քաղաքականութեան վրայ աւելի կշիռ ունի։ Ֆրանսա, հակառակ իր զաւակներուն կռիւներուն, միշտ աշխարհի կու տայ յաճախ բաղձալուած, յաճախ ատուած, բայց անժխտելի օրինակը մեծ և արդարասէր ժողովուրդի մը, որ սակայն շատ ուժ չի ծախսեր իր իրաւունքներէն, փառաւոր աւանդութիւններէն և յոյսերէն և ոչ մէկը։ Ֆրանսայի արտաքին քաղաքականութիւնը, վերջերս, շատ լաւ պարզեց Պ. Վալտէք-Ռուսօ գեղեցիկ ճառի մը մէջ, որ ամէն կողմ պատիւ բերաւ վրայ փոխնցնելուս։ Պ. Տէլքասէ հաստատականութեամբ կը վարէ մեր արտաքին քաղաքականութիւնը զոր վարձատրեցին մեր դիւանագիտական յաջողութիւնները Եւրոպայի ու Մայրագոյն Արեւելքի մէջ, և զոր նուիրագործեց պապական նուիրակին ճառը։ Հաւանական և անտարակուսելի է թէ մեր արտաքին քաղաքականութիւնը նոյնը պիտի մնայ, առանց այն լուսաւորութեան ոգիին, որուն վրայ երեք հարիւր տարի առաջ կը խօսէր Ֆրանսական մեծութեան հիմնադիրներէն մէկը, և որ ուրիշ առեւտրով մը առեւտրովութիւն կը կոչուի։ Արտաքին քաղաքականութեան մէջ չորս տարիէ ունեցանք անհաջողութիւն, անոնց և հիմա անոր առաջին պտուղները կը քաղենք։»

Ներքին Լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.— Կայս. պալատան քարտուղար անուանուեցաւ Միլքիէի շէր ջամիէրա և Ներքին գործոց նախարարութեան թղթակցութեանց դիւանին քարտուղարներէն Իսմայիլ Հագգը պէյ, որուն Սալիսէի տիտղոսն տրուեցաւ։

—Առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ վճարելի ատեանին անդամ Արիֆ պէյի և վերաքննիչ ատեանին ընդհանուր դատախազ Ճէմալ պէյի։ Երրորդ կարգի Մէճիտիէ՝ պետական խորհուրդին օրէնսդիր ճիւղին օգնական անդամ Օսման Սաիթ էֆ.ի, Չորրորդ կարգի Մէճիտիէ՝ կայս. պալատան նորընտիր քարտուղար Իսմայիլ Հագգը պէյի։

—Հիճազի երկաթուղիին ոսկի շքանշանը՝ Մեծ-Եպարքոսին։

—Նոյն ոսկի շքանշանը՝ վերաքննիչ ատեանին անդամ Նէջիպ պէյի,

ԻՏԱԼԻՈՅ Էլէնա Թագուհիին ծննդեան տարեդարձին առթիւ, երէկ, Վեհ. Սուլթանը շնորհաւորական հեռագիր մը ուղղեց անոր։

—Օսմ. պահակաները, դեսպանատանց պաշտօնատուները և իտալական շոգենաւերը դրօշներով զարդարուած էին։

—Իտալիոյ դեսպանը շնորհաւորական հեռագիր մը ուղղեց Էլէնա Թագուհիին։

ԿԱՅՍ. ՇՆՈՐՀ.— Կայս. Իրատէ մը հրամայեց որ Գասըր Կիւճէիի հանդէսին ներկայ գտնուող բոլոր զինուորներուն տրուի նոյն օրուան իրենց ռոճիկին դրամական փոխարժէքը՝ Սեփական Դրամարկղէն։ Ծովային նախարարութիւնը և Թոփխանէի վերատեսչութիւնը, երէկ, այդ դրամները բաշխեցին զինուորներուն որոնք բարեմաղթութիւններ ըրին Վեհ. Սուլթանին համար։

ԱՆԱՏՕԼԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ.— Մտադրուեցաւ թէ Անատոլի երկաթուղիներու Ընկերութիւնը որոշած ըլլալով քանի մը ճիւղեր շինել, դիմում ըրած է առեւտրական ու հանրօգուտ շինութեանց նախարարութեան։ Նորագոյն լուրի մը նայելով, նոյն նախարարութեան օգնական Ճէմալ պէյէ, մասնագէտ խորհրդական Սէրվիչէն էֆ.է, Անատօլի երկաթուղիներու տնօրէն Հուկէրին նախագահութեամբ, Զանէէյէ և փոխ-նախագահ Պ. Հիւկինէյէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմուած է այդ խնդրոյն վրայ խորհրդակցելու համար։ Յանձնաժողովը սկսած է եպարքոսական պաշտօնատան մէջ գումարուիլ՝ Ն. Բարձրութեան հսկողութեան տակ։

ԽՌՈՎԱՐԱՐՆԵՐԸ.— Եղեռնադատ ատեանը ի բացակայութեան դատեց Ֆախրի էֆ. անուն անձը, որ Այտընի կուսակալութեան իբրեւ հետեւորդ պաշտօնեայ գտնուած ատեն Իզմիրէն Աթէնք փախչելով խռովարարական արդիւնքներու ձեռնարկած ըլլալուն համար իբրեւ ոճրագործ ամբաստանուած էր։ Եղեռնադատ ատեանը նկատելով որ Ֆախրի էֆ.ի խռովարար ըլլալը հաստատուած է յատուկ յանձնաժողովին տեղեկագրովը, դատապարտեց զայն ցկեանս բերդարգելութեան, քաղաքային իրաւունքներէ և օսմ. հպատակութենէ զրկուելու ու ստացուածքներուն գրաւման։

ՖՐԱՆՍԱՅԻ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարներէն Սալվէրթի կոմսը Կ. Պոլսոյ ֆրանսական դեսպանատան քարտուղար անուանուեցաւ։ Կոմսը քանի մը օրէն Կ. Պոլիս կը ժամանէ ընտանիքով։

ՀՈԼԱՆՏԱՅԻ դեսպանը շաբաթ իրիկուն սեղան մը պիտի տայ ի պատիւ Պ. Ֆոն Զէյբըլէն Օպէրմինէրի որ Պանքօքի ընդհանուր հիւպատոս կարգուած ըլլալով, քանի մը օրէն իր պաշտօնատեղին պիտի ուղեւորի։

ՌՈՒՄԱՆԻՈՅ դեսպանատունը Բ. Դրան մօտ հարկ եղած դիմումը ըրաւ, որպէս զի վաւերացուի Թուրքիոյ և Ռումանիոյ մէջեւ կնքուած առեւտրական պայմանադրութիւնը։

—Ռումանիոյ դեսպանը, որ իր որդւոյն ամուսնութեանը ներկայ գտնուելու համար Բարիզ գացած էր, չորեքշաբթի օրը Կ. Պոլիս կը դառնայ իր որդւոյն ու հարսին հետ։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.— Իզմիրի Հաճի Սթանօ թաղին մէջ կառուցուելիք եկեղեցիին անունը պիտի ըլլայ Ս. Յովհաննէս Աւետարանիչ։ Յատակաձեւերը պատրաստուեր են Վիլհէլմ կայսեր մասնաւոր մէկ ճարտարապետին կողմէ։ Գերմանիոյ կայսրը ու կայսրուհին շինութեան ծախքին համար 12,000ական մարք տուած են և գործը իրենց հովանիին տակ առած են։ Հիմնարկէքը պիտի կատարուի փետրուարին՝ Գերմանիոյ կայսերական գերդաստանին կողմէ ղրկուած պատուիրակի մը ներկայութեամբ։

ԵԳԻՊՏՈՍԷՆ ԼՈՒՐԵՐ.— Ճաբոնի գահաժառանգ իշխանը, յառաջիկայ ամառ, Եգիպտոս պիտի այցելէ և քանի մը օր պիտի մնայ։

—Սուտանի կառավարութիւնը որոշեր է մենավաճառի վերածել փղոսկրներու վաճառումը և մասնաւորներու թոյլ չտալ որ այդ առեւտուրով զբաղին։

—Սուտանէն քանի մը վաճառականներ արտօնութիւն ուզեցին Պահր էլ-Կազալ երթալու, բայց մերժողական պատասխան առին։

—Գահիրէի մէջ կառուցուելիք յունական եկեղեցիին յատկացուած գետինը կը գտնուի Բապ էլ Նիլի և Բապ-էլ Տուլաքի մօտ։ Յատակաձեւերու պատրաստութեան համար մրցում պիտի կատարուի՝ հելլենացի ճարտարապետներու մէջ։ Աղեքսանդրիոյ Յունաց Պատրիարքը պիտի որոշէ յատակաձեւերուն էական կէտերը։ Մրցման արդիւնքը պիտի ներկայացուի Աթէնքի մէջ գումարուելիք յանձնաժողովի մը, որ վերջնական որոշումը պիտի տայ, մրցանակ մըն ալ յատկացնելով այն ճարտարապետին որուն յատակաձեւը պիտի ընդունուի։ Եկեղեցին 1200 քառակուսի մեթր տարածութեան վրայ պիտի կառուցուի։

—Թանթայի մէջ, երկուշաբթի օրը, ժանտախտէ մահացու դէպք մը պատահեր է։

ՍԱՄՍՈՆԻ ռուսական հիւպատոս Պ. Քօհլ որ ընտանիքով Կ. Պոլիս կը գտնուի, յառաջիկայ շաբթու, արձակուրդով, Ռուսաստան պիտի ուղեւորի և անկէ ալ Իտալիա։

ՁԻԵՐ.— Օսմ. Պանքային մէջ 10,500 ոսկիի վարկ մը պիտի բացուի՝ Սպարապետական Դիւանի հաշուոյն Հունգարիայէն գնուելիք 500 ձիերու համար՝ իւրաքանչիւրը 21 ոսկի։

Կ. ՊՈԼՍՈՅ Ֆրանսական դեսպանատան համար նոր շոգենաւակ մը պիտի գնուի։

ԱՆԳԼԻՈՅ դեսպանատան մէջ առջի իրիկուն տրուած սեղանին ներկայ գտնուեցան Ֆրանսայի ու Իտալիոյ դեսպանները, Աւստրիոյ Հունգարիոյ դեսպանատան գործակատարը և ուրիշներ։

ՄՈՒՍՈՒԼԻԷՆ երկուշաբթի օրուան թուականով կը հեռագրեն թէ Համիտիէ հիւանդանոցին հիմնարկէքը կատարուեր է մեծ հանդէսով։ Այդ առթիւ բարեմաղթութիւններ եղեր են Վեհ. Սուլթանին համար։

ՍԻՆԿԱՓՈՒՐԻ մէջ, Վեհ. Սուլթանին ծննդեան տարեդարձին օրը մեծ հանդէսներ կատարուեր են։ Տեղւոյն Օսմ. հիւպատոսարանը զարդարուեր է և կէս օրին շնորհաւորական ընդունելութիւններ կատարուեր են։ Քաղաքին մէջ օսմ. հպատակներու բոլոր շէնքերը դրօշներով զարդարուեր են։ Սինկափուրի արաբ ու հրեայ վաճառականները և ուրիշներ ներկայ գտնուեր են հիւպատոսարանին մէջ կատարուած շնորհաւորական ընդունելութիւններուն։ Այդ առթիւ բարեմաղթութիւններ կատարուեր են Վեհ. Սուլթանին համար։

ԿՐԵՏԷԻ խալամիներուն համար, երէկ, 375 պարկ ալիւր ղրկուեցաւ յատուկ յանձնաժողովին կողմէ։

ԲԱՂՆԻՔՆԵՐԸ.— Քաղաքապետական Բ.

շրջանակին (Պոլսոյ կողմը) տարրալուծական քննիչները, տեսնելով որ քանի մը բաղնիքներ պէտք եղած մաքրութիւնը չունին, որոշեցին գիտական պայմաններու համաձայն մաքրել տալ այդ բաղնիքները։

ԿԻՒՄԻՒՇԽԱՆԷԻ գաւառին կառավարական պաշտօնատունը պիտի նորոգուի 40,000 ղրուշի ծախքով։

ՏԱՆԻՄԱՐՔԱՑԻ համալսարանին ուսուցիչներէն մէկը ձեռնհաս պաշտօնատնէն արտօնութիւն խնդրեր, Հաղդսաի Լենտոս գիւղին մէջ հնախուզութիւն կատարելու համար։

ՕՍՄ. ՊԱՆՔԱՅԻՆ տնօրէնին ու Լէօփ Համիլթընի կողմէ տրուելիք պարահանդէսը երէկ գիշեր տեղի ունեցաւ խիստ շքեղ կերպով։ Ներկայ էին Անգլիոյ, Ֆրանսայի ու Ցունաստանի դեսպանները՝ իրենց տիկիններով. նոյն դեսպանատան պաշտօնատարներէն ոմանք, Բ. Դրան օտար թղթակցութեանց տարւոյն քարտուղար Նուրի պէյ, իրաւագէտ խորհրդական Հօգգը պէյ, պետական Խորհուրդին անդամ Մուխթար պէյ, չըհանկեր զօրքերու հրամանատար Զէքէնի փաշա, կայսերական Շիւքրի փաշա և ուրիշ պաշտօնատարներ։

ՃԻՏՏԷԷՆ կը հեռագրեն թէ մինչեւ հիմա հոն ժամանած ուխտաւորներու թիւը 12,000ի հասած է։

ՍՊԻՏԱԿԱՀԵՐ ՏՂԱՆ.—Սամսունէն կը գրեն թէ երեք տարեկան տղու մը մազերը ճերմկցեր են և հիմա սպիտակահեր ծերունիի մը երեւոյթը առած է։

ՀԱՆՐԱՑԻՆ տարրալուծական յանձնաժողովը, երէկ, գումարուեցաւ քաղաքապետ Րըզվան փաշայի նախագահութեամբ և խորհրդակցութիւններ կատարեց։

ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց նախարարութիւնը, եղած հարցումի մը պատասխանելով, ծանոյց թէ կառավարական պաշտօնատներէն և ժողովուրդէն առանձնական սենեակներ ունեցողներն ալ պիտի մասնակցին խնուլեններու շինութեան, բայց դրամական հատուցումով, քանի որ առոնք ենթակայ են տէրութեան բոլոր տուրքերուն։

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ անգլիական նաւատորմիղէն մաս մը Պիրէոնէն ճամբայ ելեր է դէպ ի Սէլանիկ, ուրկէ Իզմիր ալ պիտի երթայ։

ԻԶՄԻՐԻ պարսկական ընդհանուր հիւպատոս Զիւլֆիքար պէյ հրաժարած ըլլալով, անոր յաջորդեց Ալի Ասքար խան, եղբայր Կ. Պոլսոյ դեսպան իշխան Միրզա Րիզա խանի։ Նորընտիր հիւպատոսը Պարսկէն յառաջ իր պաշտօնատեղին պիտի ուղեւորի։

ԲՐՈՒՇԹԻՆԱՅԻ կառավարիչ, Ասաֆ փաշա, երէկ, իր պաշտօնատեղին ժամանելով գործի ձեռնարկեր է։

ԽԱԼՈՎԱ գաւառակին թաղապետական բժիշկ կարգուեցաւ Օսման Շաքի պէյ։

ԴԱՏԱԿԱՆ նախարարութիւնը ծանոյց պէտք եղած տեղերը թէ դատարաններու կողմէ նամակատուններու միջոցաւ ղրկուած կնքագրերու, բրոթէսթոներու և ուրիշ այդ կարգի գրութեանց թղթատարական ծախքը պէտք է գանձել դատի տէրերէն։

ՎԻԷՆՆԱՅԻ օսմ. դեսպանատան խորհրդական Ճէմիլ փաշա արձակուրդով Եգիպտոս պիտի երթայ։

ԻԶՄԻՐԻ մէջ, մինչեւ հիմա, 386,000 կենդինար Սուլթանիէ չամիչ ժամանելով, 376,000ը ծախուեր են։

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ.—Ցունաստանի ազգային պանքային վիճակահանութեան առաջին պարգեւը՝ հարիւր հազար ֆրանքեր է 117,673 թիւը որ Կ. Պոլսոյ հարուստ Ցոյներէն մէկին քով կը գտնուի։

ՍԻՐԱՅԻՆ ՏՌԱՄ.—Սէլանիկի մէջ Ալթամ Կանինօ անուն երիտասարդ մը, վաճառատան մը մէջ սպասաւոր, սիրային յարաբերութիւններ հաստատած էր Ռէժիի գործաւորուհիներէն դեռատի աղջկան մը հետ, որուն սիրտը այնքան ամուր կերպով փակուած չէր։ Եւատա անուն ուրիշ երիտասարդ մըն ալ կը սիրէր այդ աղջիկը, որով դէմ առնելով կը նայէր Կանինոյին։ Եւատա անցեալ օր իմանալով որ իր հակառակորդը բաւական համեղի գիշեր մը անցուցած է աղջկան հետ, անոնց գտնուած տեղը փութացեր և միսի դանակով մը սպաններ է Կանինոն. յետոյ անոր մարմինը տեղ մը թաղեր է, ոճիրը ծածկելու համար, բայց իմացուելով ոճրագործը ձերբակալուեր է։

ԳԱԼԻՈՆՃԸ ՔՈՒԼԼՈՒՔԻ կողմը, երէկ գիշեր ժամ 2ուկէսին, երկու անծանօթ մարդիկ ատրճանակ մը պարպեցին. գնդակը տան մը պատուհանէն ներս մտաւ, բայց ոչ ոք վիրաւորուեցաւ։

ՕՍՄ. ՊԱՆՔԱՅԻՆ Գալաթիոյ, Բերայի ու Պոլսոյ ճիւղերը գոց պիտի ըլլան Պայրամի առաջին օրը և յառաջիկայ երեքշաբթի 1)14 յունուար։

ՏՆՕՐԻՆԴԻ ԵՒ ՏԱՐԵԳԼՈՒԽԻ տօնական առթիւ մեր ընթերցողները կը յորդորենք ճաշակել Թոքաթլեան Ն. Սէժէ տանձախորժահամ շոքոլաները, որոնք կը ծախուին գլխաւոր խանութպաններու կողմէ։

VIN DE PEPTONE

Բաժթէօսի հաստատութեան և ուրիշ մեծ տարեգրական բոլոր հաստատութիւններուն մէջ կը գործածուի բէբբօն Շաբօրոն, միլիոնաւոր մեծ քրոջներ սնուցանելու համար։ Նաեւ կարելի է գտնել այնպիսի հիւանդներու, որոնց ստամոքսը անկարող ըլլալով, չեն կրնար սնունդ առնել։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ՊԱՏԱՍԽԱՆ
ՊՈԼՍԵՑԻՆԵՐՈՒ ՏԻՎՐԻԿՑԻՆ

«Տիվրիկի վրայ Նօթերուս վերջին մասը կորսուած և հետեւաբար հրատարակուած չըլլալով, երկրորդ անգամ երբ կը փորձէի յանձնելու համար թղթատարութեան, անձ հասաւ թղթերը, և «Արեւելք» 21 նոյ. ու 4798 թիւին մէջ կարդացի «Տիվրիկի վրայ Նօթերուն առթիւ» խորագրով ձեր գրութիւնը, ուստի հարկ համարեցի կցել սոյն պատասխանս։ Ընթերցողներուն կը թողում դատել թէ ձեր այդ գրութիւնը ճշմարի՞տ բնոյթն ու զօրութիւնը ունի՞ թէ աւելի ըսածներս հաստատելու, միայն թէ սա՛ ըսելն բաւական է որ դուք իսկ՝ կարգ մը նկարագրութիւններս հաստատելէ վերջ՝ կը խոստովանիք ճշմարտութիւնը, երբ ձեր գրութեան առաջին պարբերութեան մէջ կ'ըսէք. «Մենք ալ կուզանք բեր Տիվրիկցի մը այդ նօթերը ամբողջացնել. բիչ տաս բարեփոխելով ու ճշդելով ուղեւորին ցողած լափ լափոյ նօթերը.» Սակայն է որ կ'ամբողջացնէք, սակայն ձեր ծննդավայրին սէրն այնքան յուզած է ձեզ և ձեր արժանապատուութիւնը այնքան վիրաւորուած նկատած էք որ դուք իսկ լափ լափոյ ցողած էք՝ առանց երկար բարակ խորհելու թէ ի՛նչ կը գրէք. և իրաւցնէ կը ճշդէ՞ք ու կը բարեփոխէ՞ք թէ կեղծող մը կը չէղէք ըսած իրականութիւններս։

Երբ ճշմարտութիւնը մերկապարանոց մատնանիշ կ'ընէի, աս ու ան դիտելով ու նկատելով չէր, այլ օգտակարութեան տեսակէտով, մանաւանդ թէ այդ ճշմարտութիւնները ես իմ խելապատիկս բնաւ չէի կրնար հանել, այլ Տիվրիկ ունեցած կարճատեւ այցելութեանս մէջ միայն տեսածս ու լսածս էր, որոնց իմեր կը հանէին ձեր ազնիւ ու հայրենասէր հայրենակիցները։ Մ'ըսէք երբ ըսէք թէ բան մը մատնանիշ ընելով կարելի կ'ըլլայ դարման մը պէտքը մատնել ու գտնել, ու այդ բանը դէպքեր են նոյն իսկ ձեր հայրենակիցները, ինչպէս որ անցած ամիսներուն՝ երբ իմ նօթերս դեռ ճամբան էին ու չէին հրատարակուած, անոնցմէ մէկին ստորագրութեամբ՝ այս էջերուն մէջ՝ կարդացինք իմ ակնարկած կարգ մը պէտքերուս, մանաւանդ դպրոցին ներկայ կացութեան վրայ, որուն նկատմամբ դուք տխրութիւն մը իսկ չէք ունեցած։ Ասիկա պարզելէ վերջ՝ կուգամ մէկիկ մէկիկ պատասխանել ձեր նօթերուն։

Նախ առաջ քըած էք արդուզարդը, թուղթը և տան խնդիրները, մինչդեռ մեծ կարեւորութիւն չունին բաղդի ու դպրոցի կենսական խնդիրներուն քով, քանի որ անոնք ճաշակի և սովորութեան խնդիր են և առաջին անգը չէ որ կը բըանին քաղաքակրթութեան մէջ։ Իմ ըսածներս ջրելու համար՝ մէջ կը բերէք Պոլսոյ հայ ձկնորսներուն փօրուոը և Թոփգաբուլի ու Պոլսոյ ուրիշ թաղերու փոքր սունքերը։ Բայց, խնդրեմ, ձկնորսներուն այդ փօրուոը Պոլսեցիներէն հարիւրին քանի՞ն կը հագնին. իսկ եհքարի՝ Տիվրիկցիներէն հարիւրին քանին։ Գալով առնելաուն, համեցէք անգամ մըն ալ կարդալ նօթերս, թէ ես փոքրի ու մեծի խնդիր յարուցած եմ բնաւ. դիտողութիւնս միայն հանգստաւէտ պայմաններու, մաքրութեան ու ճաշակի վրայ էր, որոնք կը պակսին ընդհանրապէս։

Տիվրիկցի կիներուն բոլորի աղտոտութիւնը արդարացնելու համար՝ կ'ըսէք թէ Պոլսոյ մէջ շատ կիներ ալ այդպէս կ'ընեն. սակայն աղէկ գիտէ՞ք էք. մաքրութեան գործերո՞ւ մէջ այդպէս կ'ընեն՝ ինչպէս կ'ըսէք, թէ փողոցներն ալ բոլորի կը պարեն՝ որպէս կ'ընեն Տիվրիկի մէջ, և եթէ կը պարեն՝ հաւարն ո՞րն է։

Բարոյականի մասին՝ «Անդամներ և ծոյլեր... մուրացկաններ կան եղեր Տիվրիկ. ո՞ւր չեն գտնուիր ասոնք» կ'ըսէք ու կ'անցնիք՝ միայն մուրացկաններու համար մէջ բերելով դարձեալ Պոլիսը, իր մուրացկանները ու Համազգային Անկելանոցը, առանց բաղդատութեան գնելու մայրաքաղաքին բազմամարդութիւնը. «Ո՞ւր չկան» կ'ըսէք՝ առանց ըսելու դարձեալ թէ ինչ է անոնց որակն ու քանակը։

Երբ ընդարձակ առումով բարոյականի անկում կայ ըսած եմ, իրաւունք ունիմ, քանի որ հոն գտնուած միջոցիս անանց դէպքեր ու մանրամասնութիւններ պատմեցին ինծի որոնք ականջ կը վիրաւորեն, և այս Զարդարեան ըսուած քահանայէն իսկ սկսեալ, և որոնց մէկիկ մէկիկ մէջբերել գրել պատշաճութեան դէմ կ'ըլլայ։ Իրաւ, երբեմն լրագիրներու մէջ կը կարդանք թէ Լոնտոնի այսինչ հեռաւոր թաղին մէջ կին մը կամ ընտանիք մը անօթութենէ մեռած են կամ անձնասպան եղած ու կը հաւատանք. սակայն ծիծաղելի չէ՞ր ըլլար՝ եթէ ըսէինք թէ Լոնտոնի ժողովուրդը աղքատ է ու մենք միամտաբար հաւատայինք։ Ո՞վ լսած է թէ Թուրքիոյ յետին գաւառներուն մէջ անգամ անօթութենէ մահ մը պատահած ըլլայ։ Բարեխնամ կառավարութեան հոգածութեան շնորհիւ՝ այդպիսի բան մը տեղի ունեցած չէ բնաւ։ Ինչո՞ւ ուրեմն կ'աշխատիք միշտ առաջ քշել այսինչ քաղաքը, այնինչ գաւառը, չարդարացնելու համար Տիվրիկի աս ու ան ակար կողմը։ Գիտէ՞ք աս ըրածնիդ ի՛նչ կը նմանի. դպրոցի պզտիկ տղու մը երբ հարցուի թէ ինչո՞ւ աս կամ ան բանը ըրեր, շատ անգամ զինքը արդարացնելու համար կ'ըսէ թէ այսինչն ալ ըրաւ։ Բայց գանք որ Տիվրիկցիներուն ամէն համեմատութենէ վեր է։

Տիվրիկցիներուն գործունէութեան և առեւտուրի մէջ յաջողած ըլլալնուն ի պաշտպանութիւն կ'ըսէք. «.... Տիվրիկի վաճառականները Հալէպ կ'երթեւեկէին.» Դարձեալ սաստկանալութիւնը ջատագովելու համար՝ կ'ըսէք. «Ի մէջ այլոց, ո՞վ չ'գիտեր Տիվրիկի Պըսկանեան և Հայրանեան գործարանները, որոնց արդիւնաբերութիւնները համբաւաւոր էին.» Երբ էին կ'ըսէք, կը նշանակէ թէ պատմական է ու հիմա գոյութիւն չունին, գոնէ ես չտեսայ ու չլսեցի։ Ու վերջը՝ ինչպէս տուներու խնդիրներու ժամանակ՝ հոս ալ դարձեալ մէջ կը բերէք Բինկեոլ, Զմառա, Կամախ, Կուրտոսին եւլն գիւղերը, բաղդատելով Պոլսոյ մօտ գտնուող շատ մը քաղաքներու հետ՝ կ'ըսէք. «.... Աւելի քաղաքակիրթ են, հագուստի ու կողմուստի մասին, և թէ առեւտուրի ասպարէզին մէջ իրենց գրաւած կարեւոր դիրքով.» Դիտենք թէ և իրաւ ա՛լ այդպէս է. բայց, սիրելիս, անգամ մըն ալ կարդացէք նօթերս և տեսէք թէ ես Տիվրիկի գիւղերուն ակնարկութիւն մը ըրա՞ծ եմ երբեք։ Ասով՝ հակառակ ձեր արտայայտութեան՝ ըսել ուզած չէ՞ք թէ Տիվրիկի գիւղերը շատ աւելի քաղաքակիրթ և գործունեայ են քան քաղաքացիները։

Գալով կրթականին՝ մինչեւ 200 տարի առաջ կ'երթաք և դէմքեր ու դէպքեր մէջ կը բերէք՝ հաստատելու համար Տիվրիկցիներուն կրթասիրութիւնը։ Ես բնաւ չեմ ըսած թէ Տիվրիկ բարերար հասուցած չէ, կրթասէր չէ, այլ անտարբեր է։ Նաեւ տարբեր բան է թէ Նալեան Ցակոբ Պատրիարք Տիվրիկի քաղաքէն չէ, այլ Զմառա գիւղէն, և իր ուսումն ու լուսաւորութիւնը չէ թէ իր ծննդավայրին մէջ ստացեր է, այլ Պոլիս։ Կրնաք քըրքըել անոր կենսագրութիւնը։

Կարծեմ թէ ալ դուք ա՛լ համոզուած զգացուցիք թէ ձեր մէջ բերած փաստերը այնքան զօրաւոր չեն՝ հերքելու համար իմ ըսածներս, և հետեւաբար աւելի կը փակեմ մեծագործ ընդ միջ այս վիճաբանութիւնը, ըլլա՛յ ձեզի, ըլլայ ձեր ուրիշ հայրենակիցին հետ։ Մ. Գ. Փ.

Ազգային Լուրեր

Տրապիզոնի Առաջն. Տեղապահ Տ. Եղիշէ վարդապետ Գալաթեան հոկտ. 12ին թեմական այցելութեան ելլելով, Օրտու գացեր է առաջին անգամ։ Սոյն անգամ բաղկացեալ քուէարկութեամբ Խորհուրդ մը կազմեր է. նմանապէս կարգադրութիւններ ըրեր է 20 հայաբնակ գիւղերու կրթական վիճակի մասին։

Օրտուի մէջ մէկ վարժարան կայ, 1 տնօրէն 5 ուսուցիչ, 3 ուսուցչուհի 450 երկսեռ աշակերտներով. Տարեկան 450 Օ. ծախքով։ 1 մանկապարտէզ և մէկ մեծ կաթողիկէ եկեղեցի 2 քահանայով, տարեկան ծախք 60 ոսկի։ Մանկապարտէզին համար կազմեր է տիկնանց խնամակալութիւն մը։ Ցետոյ Եղիշէ վարդապետ այցելեր է Կիրասոն, Էրիվու և Թիրպոլի և հոն ալ ինչ ինչ կարգադրութիւններ ըրեր է։ Տրապիզոնէն խնդրուեր է որ առաջնորդական ընտրութեան հրահանգ ղրկուի։

—Խարբերդի Պատր. Փոխանորդ Տ. Եղիշէ Ծ. վարդապետ Պատրիարքարանի հրահանգին համաձայն ձեռնարկեր է կազմակերպել Վիճակին Քաղաքական Ժողովը։

—Կեսարիոյ անապատի միաբանութեան Տնօրէն Ժողովը շնորհակալութիւն յայտներ է Ս. Պատրիարք Հօր՝ Տ. Ցովսէփ եպիսկոպոսի հրաժարականն ընդունելու և Աղաջանեան Տ. Սահակ վարդապետն անապատին վանահայր կարգելուն համար։

—Եւդոկիոյ Կրօնական և Քաղաքական Ժողովի հաստատութեան Պատրիարքական օրհնութեան կոնդակը այսօր կը ղրկուի թղթատարով։ Այդ կոնդակով առաջնորդ Տ. Պետրոս եպիսկոպոսի և նորընտիր Կրօնական և Քաղաքական Ժողովի անդամներուն օրհնութիւններ և յորդորներ տրուած են։ Նոյնպէս Եդեսիոյ նորընտիր առաջնորդ Տ. Անանիա վարդապետ Հոգաբարձութեան օրհնութեան և հաստատութեան կոնդակը այսօր կը ղրկուի Պատրիարքարանէն։

—Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոս Տ. Գէորգ Սրբազան և Տ. Բարթողիմէոս արքեպիսկոպոս, երէկ, հիւանդատեսի գացին Սպարապետութեան Դրան Թարգման և Բերայի Թաղ. Խորհուրդի Ատենապետ Վսեմ. Մեքսայէլ էֆ. Մավիանեանի, որուն հիւանդութիւնը ապաքինման ճամբուն մէջ է։ Այս շաբթու, հիւանդատեսի գացած են նաեւ ծանօթ եկեղեցականներ և իր ատենէջեան՝ Տ. Ե. Մկրեան Հայրը։

—Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցւոյն համար յառաջիկայ Ծննդեան տօնին առթիւ քարոզիչ կարգուած է Արմաշու Նորընծաներէն Տ. Սահակ վարդապետ Օտաղլեան։

—Խառն Ժողովը վաղը նիստ չպիտի գումարէ, ինչպէս ծանուցուած էր կանխաւ։ Ս. Պատրիարքը հարկ դատած է Ծնունդէն յետոյ նիստի հրաւիրել Խառն Ժողովը, որուն պիտի հաղորդէ Վսեմ. Գաբրիէլ էֆ. Նորատունկեան՝ արդիւնքը այն տեսակցութեանց զորս ունեցած է Նորընտիր Ս. Կաթողիկոսին հետ։

—Պատր. Փոխանորդ Տ. Գաբրիէլ Սրբազան, երէկ, Ցունաց Պատրիարքարանը երթալով, Ծննդեան աւուրն առթիւ այցելութիւն տուաւ Ցունաց Ս. Պատրիարքին։

—Ս. Պատրիարքը թագրերով մը պատասխանած է այն գնեկալրաներուն, զորս կրթական նախարարութիւնը ուղղած էր Պատրիարքարանի, Դատական նախարարութեան միջոցաւ։

—Բերիէէն կը գրեն մեզ գեղի. 15 Թուականով.—«Հինգ ամիսէ ի վեր Տ. Կորիւն Ծ. վարդապետ Էլիզբեթեան Զարասանճագի Առաջնորդութեան պաշտօնին հետ ստանձնած է նաեւ Զմշկածագի և Կապան-Մադէնի Առաջն. Տեղապահութիւնը, զոր կը վարէ խղճմտութեամբ։ Կորիւն վարդապետ Զարսանճագ ժամանած օրէն ի վեր անդադար կ'աշխատի թեմական գործերը կանոնաւորելու, որոնց վրայ կ'աւելնայ նաեւ երեսուն որբերու ներթական և բարոյական զարգացման մեծ հոգը։ Որբանոցի մը շինութեան գաղափարի յղացումէն անմիջապէս յետոյ, գործադրութիւնը փութացուց։ Ժողովրդեան անխոնջ աշխատութեամբ ու արտաքուստ նպաստներով՝ վերջապէս շինել տուած է բարձր, ընդարձակ և հոյակապ շէնք մը, ուր հիմա տեղաւորուած են որբերը որ երկու տարիէ ի վեր հոս ու հոն, մթնոտ տնակներու մէջ կը տառապէին թէ՛ բարոյապէս և թէ ֆիզիքապէս։ Շէնքը հաստատ և պատշաճ ներքով չքնաղացուած է. վերին յարկը Ազգային Առաջնորդարանն է. միւս երկու յարկերը, որոնք կը պարունակեն ննջարան, սեղանատուն, խոհանոց, մառան, չամմարան, տիրա. փայտանոց եւլն. որբանոցը կը կազմեն։ Որբանոցը իր բարձր դիրքին հետ ունի նաեւ գեղեցիկ տեսարան մը. առջեւէն կ'անցնի Եփրատ մեծ ճիւղերը։ Ամբողջ շէնքը առնուազն 300 ոսկի արժողութիւն ունի։

«Առաջնորդ Ս. Հայրը մեծ հոգ կը տանի կրթական գործին զարգացման, միշտ որբանոց կ'այցելէ և կը քաջալերէ ուսուցիչներն ու որբանոցը։ Այս հոգածութիւններէն զերծ չեն նաեւ Խողաթի, Մեծկերտի և Բերդակի նպաստընկալ վարժարանները, որոնց բարւոք կացութեան և յառաջդիմութեան մասին միշտ հրահանգներ կ'ուղարկուին ուսուցիչներուն։ Առաջնորդ Ս. Հայրն անդադար կը քարոզէ եկեղեցիի բեմէն, հոգեւորապէս մխիթարելով ժողովուրդը։ Իր պաշտօնին ու գործերուն մէջ պարզամտական, հաշտական գործունէութեանց մէջ անշահ ու հաւատարիմ է, հեռու կը վարէ տեղւոյս գաւառական պէտքերն և միւս պաշտօնատարներուն սէրն ու համակրանքը։»

Հեռագիր Այսօրուան

(Աժանս դը Քոնսթանթինոբլ)

ՊԵՐԼԻՆ, 8 յուն.—Բրուսիոյ Խորհրդարանը, այսօր, բացուեցաւ գահաճառով մը՝ զոր կարդաց Ֆոն Պիւլով կոմսը։ Գահաճառը կը յայտարարէ թէ կառավարութիւնը ազդու կերպով պիտի կասեցնէ իր պաշտօնականութիւնները՝ արեւելեան Բրուսիոյ նահանգներուն մէջ գերման ազգութեան շահերը պաշտպանելու և հակագերման շարժումները արգիլելու համար։

—Գերմանիոյ Խորհրդարանը, այսօր, բացուեցաւ։ Ելմտացոյցի վիճաբանութեան պահուն նախարարապետ Ֆոն Պիւլով կոմսը յայտարարեց թէ Գերմանիոյ բանակին նկատմամբ Պ. Չէմպըրլէնի ըրած ակնարկութիւնները ցաւալի են, մանաւանդ անոր համար որ Գերմանիոյ ու Անգլիոյ միջեւ յարաբերութիւնները միշտ լաւ եղած են ու բարեկամական և թէ այդ յարաբերութեանց անվթար շարունակութիւնը համապատասխան է երկու երկիրներու շահերուն։ Եռեակ Դաշնակցութեան համար ըսաւ թէ մեռած չէ և թէ ընդհակառակն դեռ շատ երկար ատեն պիտի ապրի։ Այդ դաշնակցութիւնը որ յարձակողական հանգամանք չունի, այլ բոլորովին խաղաղական է, անկարելի չըներ ուրիշ որ և է տէրութեան հետ բարւոք յարաբերութիւններ ունենալ։ Ֆոն Պիւլով կոմսը յարեց թէ Ֆրանսայի ու Իտալիոյ համաձայնութիւնը Եռեակ Դաշնակցութեան դէմ ուղղուած չէ, թէ երեսուն տարիէ ի վեր Գերմանիոյ քաղաքականութիւնը միշտ խաղաղասէր եղած է և թէ, Եռեակ Դաշնակցութիւնը եթէ անհրաժեշտ պէտք մը չէ Գերմանիոյ համար, սակայն միւս կողմէ ամէնէն թանկագին ու զօրաւոր երաշխաւորութիւնն է խաղաղութեան և իրաց կացութեան պահպանման։ (Ծափահարութիւններ։)

ՎԻԷՆՆԱ.—Բոլիթիշէ Քօռէսբօնտէնց Փրանսական ձեռնհաս աղբիւրէ արտօնուած է բացարձակապէս հերքել Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Պ. Տէլքասէի վերագրուած բոլոր յայտարարութիւնները զորս ըրած ըլլայ Ճիորնալէ տ'Իթալիա թղթակցին հետ տեսակցած պահուն։

(Աժանս Նասիոնալ)

ՆԻՒ ԵՈՐՔ, 8 յունուար.—Նիւ Եորքի ժողովուրդը պիտի խնդրէ ամերիկեան կառավարութենէն չմասնակցիլ Էտուարդ Է.ի թագադրութեան հանդէսին։

ՍՕՖԻԱ.—Պուլկարիոյ նախարարութիւնը տակաւին չորոշեց Սոպրանիէի համար կատարուելիք ընտրութեանց թուականը, բայց հաւանօրէն քիչ ատենէն տեղի պիտի ունենան։ Նախարարապետ Պ. Տանէվ, այսօր ալ, տեսակցեցաւ Սթամպոլովի կուսակցութեան գլխաւոր անդամներուն հետ, որոնց պիտի յանձնէ ներքին գործոց ու հանրօգուտ շինութեանց նախարարութիւններու պաշտօնները։ Համաձայնութիւնը գոյանալուն պէս, ընտրութեանց թուականը պիտի սահմանուի։

ՄԱՏՐԻՏ.—Սպանիոյ Խորհրդարանը յունուար 20ին պիտի գումարուի։

ՊԵՐԼԻՆ.—Այսօր կատարուեցաւ Բրուսիոյ Խորհրդարանին բացումը։ Գահաճառը կ'ըսէ թէ երկրին ելեւմտական կացութիւնը անպաստ է։ Կը յարէ թէ կառավարութիւնը ազդու կերպով պիտի պաշտպանէ գերմանականութիւնը արեւելեան նահանգներու մէջ։

ԼՈՆՏՈՆ.—Անգլիոյ պատերազմական նախարարութիւնը կը շարունակէ նոր զինուորներ պատրաստել հարաւային Ափրիկէ ղրկելու համար. Վաղը, 9 յունուար, հեծելազօրներու գունդ մը շոգենաւ պիտի նստի։ Ցունուար 15ին Էտուարտ թագաւորը անձամբ պիտի անցնէ անձնապահ զօրագունդին վրայ մը որ յունուար 16ին Սաութհէմթընէն ճամբայ պիտի ելլէ դէպ ի հարաւային Ափրիկէ։

ԼՈՆՏՈՆ.—Սըր Էտուար Կրէ Նիւքասըլի մէջ ճառ մը խօսելով, ձայն տուաւ Լորտ Ռոզպըրիի ընտրելութեան, իբրեւ Ազատականներու պետ։

ՉԻԼԻ.—Չիլի և Արժանթին ընդունեցին Անգլիոյ իրաւարարութիւնը, իրենց վէճը կարգադրելու համար։

ՀՌՈՄ.—Լաւատեղեակ շրջանակներու մէջ կ'ըսուի թէ Իտալիա անոր համար կը ջանայ Ֆրանսայի մօտենալ, որպէս զի յաջողցնէ հարիւրին հինգ փոխառութիւնը, Բարիզի սեղանաւորներուն օժանդակութեամբ։

ՍԱԿԱՐԱՆ

Երկու օրէ ի վեր բաղդատաբար անկում կայ օսմ. թուղթերուն վրայ։ Եւ այս պէս կ'ըլլայ սովորաբար, քանի որ, վերջապէս ամէն օր շարունակ բարձրացում չի կրնար ըլլալ։ Բայց ինչ որ անկում կը տեսնուի ըստ երեւոյթին, սակարանական շրջանակներու մէջ, պարզ յետաշրջում կը նկատուի այս իբր հետեւանք վերջին օրերու բաւական բարձրացումներուն և ոչ երբեք աջակցելու բարձրացման շնորհիւ վաճառումներուն վրայ, զոր ըսած էր երէկուան Հայրենիքը։

Ի՞նչ կը նշանակեն այդ տողերը։ Բան մը հասկցա՞ք։

—Թրանսվալի թուղթերուն այսօրուան սակն է, հոս 104 Փր., Բարիզի մէջ 109 Փր. և Լոնտոնի մէջ 4 հատ անգլիական ոսկի ու 21։

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ՓԱԿՈՒՄ

Օսմ. Քոնսոլիտէ Սերի Դ.	Օ. Ո.	27	22
Ամէնէն բարձր գին	»	27	26
Ամէնէն վար գին	»	27	22
Պանքէ Օթոմ. զոյգ.	Ֆր.	108	—
Ամէնէն բարձր գին	»	109	12
Ամէնէն վար գին	»	108	12

ԲԱՑՈՒՄ 27 Դեկտեմբեր

Օսմ. Քոնսոլիտէ Սերի Դ.	Օ. Ո.	27	22
Պանքէ Օթոմանեան	Ֆր.	108	—
Թամպաքի		—	—
Ռէժի		13	30
Օսմ. Բանքա		—	—
Թուրք ծխախոտ 1894		0	10
Սաւ. ՕՖ. Տանձ է Վայէռ		0	12
Օսմ. Ապահ. Ընկ.		3	55
Թրամվայի բաժնեթ.		5	65
» ծառայութ.		2	40
» պարտաթ.		471	—
Թունէլ Կ. Պոլսոյ		465	—
Թունէլին		100	—

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Լոնտոն ամիս	Ղրշ.	110	10
» » » չէք	»	111	10
Բարիզ » »	Ֆր.	22	81
» » » չէք	»	23	81
Պէռլինի մարքաս չէք	Մարք	18	57
Վիէննա չէք	Քրոն.	24	—

ԴՐԱՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔ

20 Ֆրանքնոց	Ղրշ.	87	30
Անգլիական ոսկի	»	110	06
Ռուս իմբէրեալ	»	90	20
Ֆլորին	»	51	08
Մէճիտիէ ոսկի	»	118	03
Մէճիտիէ	»	94	20
Օսմանլի Ոսկի	Օ. Ո.	8	61

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 8 Յունուար

Անգլիական Քոնսոլիտէ		94	25
Օսմանեան Սերի Բ.		50	75
Օսմանեան Սերի Գ.		25	—
Օսմանեան Սերի Դ.		25	25
Օսմանեան Ֆոնտա		11	75
Եգիպտական 1890		103	87
Էլլէնական 5%		39	—
» Մոնոփոլ		42	—
Պորտուգալական 1853		34	—
Ռուսական Քոնսոլ		106	75
Արժանթին		104	—
Բրազիլեան		4	—
Ցրանսվալ Երկաթուղի		13	—
Ռէժի		35	365

ԲԱՐԻԶ, 8 Յունուար

Ֆրանս. Քոնս. 3%		100	52
» » 3 1/2%		101	95
Օսմ. Քոնս. Սերի Դ.) բաղ.	Ղրշ.	25	43
) Հաշ.	»	25	45
» » » Բ.	»	50	90
» » » Գ.	»	27	85
Օսմ. Պանքա Բաժնե	Ֆր.	514	—
Օսմանիէ	»	458	—
Բալժիք Երկաթուղի	»	112	75
Օսմ. Ծխախոտ	»	535	—
Օսմ. Ռէժի	»	315	—
Եգիպտական 4%	»	109	—
Քանալ Սուէզ		1017	—
Անատոլուի Երկաթուղի		100	40
Արժանթինեան պարտաթ.		77	55
Ռիօ Թինթօ		101	50
Օսմ. Լոթերի ...		35	125
Դը Բիրս		4	—

ՊԵՐԼԻՆ, 8 Յունուար

Օսմ. Լոթ	»	216	30
Անատոլուի Երկաթուղի	»	108	—
Սելան. Մոնաս. Երկաթուղի	»	105	40
Թուրք Լոթերի վիճակ 3 տոկ.	»	96	240

ՎԻԷՆՆԱ, 8 Յունուար

Օսման. Լոթերի վիճակ	»	229	50
Անատոլուի Երկաթուղի	»	115	75
Օ. Ռ. Ռէժի		288	—

Տր. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ-ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
396, Մեծ փողոց Բերա, 396
Տեսնել 4րդ Երեսը
Պոլսոյ կողմը մասնաճիւղ չունինք

ՀԱՆՐ. ՊԱՐՏՔԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱԶԴ.—Հանր. Պարտքի Վարչական Խորհուրդը կը ծանուցանէ 4 % Բրիվիլէժ պարտաթուղթի տէրերուն թէ 1890 ապրիլ 15)27 թուակիր կայս. Իրատէին 1ին յօդուածին համաձայն, իրենց պայմանաժամը լրացած թուականէն մինչեւ 6 տարի չգանձուած բոլոր կտրոնները ջնջուած պիտի համարուին։ Հետեւաբար, յիշեալ պարտաթուղթերուն թիւ 11 կտրոնները, որոնց պայմանաժամը 1896 մարտ 1)13ին լրացած են, եթէ մինչեւ 1902 փետր. 28)13 մարտ չգանձուին, Հանր. Պարտքի Վարչութեան կողմէն վճարուած պիտի համարուին։

* * *

Հանր. Պարտքի վարչական Խորհուրդը կը ծանուցանէ Օսմ. փոփոխեալ պարտքի պարտաթուղթ ունեցողներուն թէ՝ 1881 դեկտ. 8)20ին հրատարակուած Կայս. Իրատէին 5րդ. յօդուածին համաձայն, իրենց պայմանաժամը լրացած թուականէն մինչեւ 6 տարի չգանձուած բոլոր կտրոնները ջնջուած պիտի համարուին։ Հետեւաբար, յիշեալ պարտաթուղթերուն թիւ 25 կտրոնները, որոնց պայմանաժամը սահմանուած է 1896 մարտ 1)13ին, եթէ մինչեւ 1902 փետր. 28)13 մարտ չգանձուին, Հանր. Պարտքի Վարչութեան կողմէ վճարուած պիտի համարուին։

Կ. Պոլիս, 5)18 1901 11—13
ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԳԻՆԻ [illegible] արուեստ, բժիշկներու կողմէ յանձնարարուած նոր պայքարնաները և անարիւնութեան ունեցողներու։ Դիմել Օրթագիւղ, Հանգուցեալ մուխթար Ցակոբ աղայի տունը։

ԱՐԻՍ ԵՒ ԸՆԿ

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ
ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

ՀԻՄՆԵԱԼ 1889ին
Կ. ՊՈԼԻՍ
Թահթաքալէ

ՎԱՃԱՌԱՆԻՇ

Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ և առաջնակարգ մեքենաներով օժտեալ ու եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանուրբ հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ և լուացքի պարզ օճառներ։

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանաց դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիներու գերազանց աժանութիւնը։ Փափաքողներուն քաթալոկը ձրի կը ղրկուի։

Մեծաքանակ գնում ընել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ Օրոստի Պաք և Կ. Ինճիճեան Որդիք վաճառատուններուն, իսկ գաւառներու և օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով.

ԲԱՐԻԶ.— Գ. Գ. Լազարիէս Որդի եւ Ընկ. 28.—Ռիւ Շաթօտէօն։
ՊՈՄՊԱՅ.— Գ. Գ. Ապքար եւ Ընկ.
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ.— Գ. Մ. Գալֆաեան.
ԳԱՀԻՐԷ.— Գ. Հ. Ռոզանթալ.
ՌՈՒՍՋՈՒՔ.— Գ. Գ. Կ. Ինճիճեան Որդիք.
ՎԱՌՆԱ.— Գ. Կէռոն Արտիթի
ԶՄԻՒՌՆԻԱ.— Գ. Հայնրիխ Վառնինկ.
ՍԷԼԱՆԻԿ.— Գ. Տինօ Ֆէրնանտէզ.
ԽԻՕՍԻՕՍ.— Գ. Մ. Քափուանօ.
ՊԷՅՐՈՒԹ.— Գ. Ֆրանքէլ Շիֆֆնէր.
ՍԱՄՍՈՆ.— Գ. Գ. Գէորգեան Եղբարք.
ՏՐԱՊԻԶՈՆ.— Գ. Արիս Կ. Ինճիճեան.
ՍԵԲԱՍՏԻԱ.— Գ. Գ. Վ. եւ Ս. Մեծատուրեան.
ԻԶՄԻՏ.— Գ. Ցակոբ Մոմճեան.
ՌՈՏՈՍԹՕ.— Գ. Ցակոբ Բռօվտոալ.

ՄՈՒՉՈՒԱԼ ԼԱՅՖ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ՆԻՒ-ԵՈՐՔԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍՏԱՏԵԱԼ 1843ին
Պահեստի գումար ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 687 ՄԻԼԻՈՆ Ֆրանք
Ապահովագրական ամէն կարելի դրութիւնները կը գործածէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զուակաց դրամագլուխ, ցման եկամուտ, եւայլն

Միւչուալ Լայֆի սակագինը եւ ապահովագրութեան զանազան դրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրուրուիք.—Առատաձեռն պայմաններ, վճարմանց դիւրութիւնք։ Տեղեկութեանց համար դիմել առ Պ. Ֆ. ՀԷՌ, ընդհանուր գործակալ, Խնաեէթ խան, Վօյվօտա փողոց, Ղալաթիա, Կ. Պոլիս։ 579

«ՀԱՄԻՏԻՅԷ» ՖԷՍԵՐԸ

Վեհ. Սուլթանին բարձր շնորհաց հովանւոյն Ֆէրիգիւղի մէջ մեր հաստատած «Համիտիէ» ֆէսերու գործարանին արտադրութիւնները իրենց նրբութեամբ եւ աժանութեամբ այժմ կարող են մրցիլ եւրոպական արտադրութիւններուն դէմ։ Անկէ զատ իրենց խիստ աժանութեամբը մեր արտադրած ֆէսերը կը գոհացնեն մեր ժողովուրդը, որ կը փափաքի տեղական արտադրութիւնները քաջալերել։ Մեր բուն նպատակն է երկրին պէտքերը նոյնիսկ մեր արտադրութիւններով գոհացնել, եւ մրցելով եւրոպական արտադրութեանց հետ քաջալերել տեղական ճարտարարուեստը։ Պատիւ կը համարինք յայտարարել նաեւ թէ մեր ֆէսի արտադրութեանց հասոյթին հարիւրին 2ը Հիճազի երկաթուղւոյ գծին շինութեան յատկացուցած ենք։ Նոյնպէս Համազգային Անկելանոցին 450 եւ Պրուսայի Համիտիէ արուեստից վարժարանին 150 ֆէս նուիրած ենք ձրիաբար մինչեւ [illegible]։ Մեր ֆէսերը ամբողջն եւ քրքումքն չեն վնասուիր եւ կաղապարուելու ալ պէտք չունին։ Կը յանձնարարուի թրջած ֆէսերը չորցնելու համար կրակի չբռնել։

Մեր ֆէսերը առանց ծոպի կը ծախուին վերջին գնով։

Գիներն են՝ մէջը բիպէքով խիստ տաքուն ֆէսեր 5 ղրշ. մէջը խսիրով հաւասարած 8 ղշ., մէջն մէջ ֆէսով 10 ղշ., մէջը սնդուսով պատուած 13 ղշ.։ Ասոնցմէ զատ ուզուած ձեւով ֆէսեր կը շինուին գործարանիս մէջ յանձնարարութեամբ։

Կը ծախուի,—Պոլսոյ կողմը Համիտիէ Ճառտէսի Բիւլիւլ Իսմայիլ փաշա խանին տակ թիւ 17, Տէլէգիէր Արասը թիւ 71 եւ Ազգէրայ Նէշէի Պուլումպա փողոց թիւ 101 վաճառատունները, Շէհր Էմին պէյի որթարանին մօտ մեր գործատան մէջ, Պէշիքթաշ Քէֆէնճիլէր բաղնիքին կից թիւ 55 եւ Սկիւտար մեծ շուկային մէջ թիւ 44 վաճառատունները։
788 2—52

ԹԻ ԿՐԷՇԱՄ
ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. Ի ԼՈՆՏՈՆ
Ընկերութեան դրամագլուխը 31 դեկտ. 1898ին
162, 924, 140 ֆռանք
Տարեկան եկամուտ, ապահովագրութիւններէ եւ շահ՝ 31 դեկտեմբեր 1898ին
29, 765, 473 ֆռանք
Ընկերութեան հաստատութեան թուականէն՝ այսինքն 1848է ի վեր, ապահովագիրներուն եղած վճարումներ, կենսաթոշակ, եւն.
362, 858,507 ֆռանք

1898 տարուան մէջ ընկերութիւնը 6619 [illegible] 58,680,000 ֆռանքի դրամագլուխ մը կը ներկայացնէին։
Ամէն տեղեկութեանց համար դիմել ընդհանուր գործակալներուն՝ Գ. Գ. ԷՏՈՒԸՐՍ ԵՒ ՈՐԴԻ, Պոլիս, Մէյտանճըգ փողոց, Ալալէմճի խան։
Միջնորդներուն լաւ վարձատրութիւն պիտի ըլլայ։
Փոխ-գործակալութիւն, Ղալաթիա, Մէյմէնէթի խան։

ERNEST GLAVANY
ԴՐԱՄԱՏՈՒՆ ԷՌՆԷՍԹ ԿԼԱՎԱՆԻ
ՂԱԼԱԹԻԱ, „ՕՍՄԱՆԵԱՆ„ ՊԱՆՔԱՅԻ ԿԱՐԴԸ, ՑԱԿՈԲԵԱՆ ԽԱՆ

Սոյն դրամատունը կը վաճառէ ամէն տեսակ արժեթուղթեր՝ իրենց գինին համեմատութեամբ՝ ամսական 20 ղրշ.էն մինչեւ 100 ղրշ. որոշեալ գումարի մը վճարմամբ։ Դրամատունը առաջ քաշուած վիճակահանութեանց թիւերը նայելու եւ շահուած պարգեւները գանձելու համար՝ ամէն կերպ դիւրութիւն ցոյց կուտայ։

Գնողները երբ առաջին վճարումը ընեն, իրենց մուրհակ մը կը տրուի մեր կողմէ ստորագրուած եւ դրոշմուած։ Անկէ զատ արժեթուղթին թիւը ցոյց տուող ուրիշ ծանուցագիր մըն ալ կը տրուի, եւ գնողը նոյն առտնէն իսկ ամէն վիճակահանութեանց մասնակցելու իրաւունք ունենալով, շահածը ամբողջապէս կ'առնէ։

Աւելորդ է յայտնել թէ ամենէն աղքատ անգամ այս դիւրութեամբ կրնայ արժեթուղթի տէր ըլլալ, եւ յայտնի է որ ամսական 20 ղրշ.ի վճարումը մեծ զոհողութիւն մը չըլլալով եւ ամէն մարդու դիւրամատչելի ըլլալով, ամէն հաւանականութիւն ունի օր մը շահելու, եւ եթէ երբեք չշահի ալ, իր վճարումներուն շնորհիւ, յառաջիկային արժեթուղթի տէր պիտի ըլլայ, որ իրեն համար շահու աղբիւր մըն է։



ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՔՐՈՂԱԿԱՆԸ
HUNYADI JANOS
Անմիջական, ապահով եւ դիւրին կերպով կ'ազդէ
Տիեզերահռչակ ճամբաւ
ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾԻՔԷՆ
Պահանջելու է հեծեալ անունը պարունակող պիտակով շիշեր
ANDREAS SAXLEHNER
Կը ծախուի գլխաւոր դեղավաճառներուն եւ դեղագործներուն քով։ 387

ՊԵՐԼԻՆԻ ՎԻՔԹՈՐԻԱ
ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Արքայական հրամանագրով արտօնուած 1853 ամին. 26ին կառավարութեան հսկողութեան տակ

Պէրլինի Վիքթորիան Գերմանիոյ ամենէն հզօր Ընկերութիւնն է
Ապահովագր. դրամ Ֆր. 967,321,496
Պահեստի դրամ Ֆր. 270,096,743
ՊԷՐԼԻՆ ՎԻՔԹՈՐԻԱՆ ամէն տեսակ ապահովագրութիւն կ'ընդունի, ինչպէս կեանք, օժիտ, արկած, ցկեանս թոշակ, եւն.

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ
Ժողովրդական ապահովագրութիւն կեանքի վրայ. առանց բժշկական քննութեան

Կարելի է ապահովագրել իր կեանքը, կամ տղոց ու որբերու համար օժիտ մը, [illegible] փոքր վճարումներով.—(միեւնոյն պայմանները կանոնաւոր ապահովագրութեան համար)։

Ապահովագրութիւն տոգնուչի, երկաթուղիի, բիւնէյի եւն. արկածներու դէմ, ամբողջ կեանքին համար, շաբաթական փոքր վճարումով մը, սկսեալ ՄԷԿ ՖՐԱՆՔԷ, եւ վճարելի միմիայն մէկ տարուան համար (52 շաբաթ, այսինքն 52 ֆրանք), այսպէսով ամբողջ կեանքին համար ապահովագրուած կ'ըլլայ 10,000 ֆր.՝ մահուան պարագային, 15,000 ֆր.՝ արկածէն առաջ եկած անկարողութեան պարագային, եւ օրական հինգ ֆրանք՝ ժամանակաւոր անկարողութեան պարագային։

Ընկերութեան Դրամատունը.—ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ
Ընդհ. Գործակալ,—ԷՄԻԼ ՎՕԳԼ
Ղալաթիա, Օսմ. Պանքային դէմը, Խնայէթ խան, թիւ 7, 8, 9։

ՔԻՒՆԱՐՏ CUNARD
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ
[illegible]

Շոգենաւ	Թոնօ	Շոգենաւ	Թոնօ
[illegible]	13900	[illegible]	[illegible]
[illegible]	13900	[illegible]	[illegible]
[illegible]	12952	[illegible]	[illegible]
[illegible]	12950	[illegible]	[illegible]
[illegible]	8545	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]

[illegible]
Joly et Seager
[illegible] 155

ՄՕՍ
ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
[illegible]

Շոգենաւ	Թոնօ	Շոգենաւ	Թոնօ
[illegible]	3000	[illegible]	[illegible]
[illegible]	3000	[illegible]	[illegible]
[illegible]	3000	[illegible]	[illegible]
[illegible]	3000	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	1800
[illegible]	[illegible]	[illegible]	1800

[illegible]
184 [illegible]

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1852
Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ-ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ
396 ՄԵԾ ՓՈՂՈՑ ՊԷՐԱ 396
(Եանճի զաւեշտատան վրայի յարկը, ճիշդ Զըպուճեանց դէմը)
[illegible] մէկ անգամէն կը [illegible] ցաւով շինելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ։
[illegible] դէմք ճշդութիւն [illegible], ծամողութիւն եւ ազատ [illegible]
[illegible]
[illegible] ցաւի [illegible]
Ս. Գ. [illegible] (միծյեւ ժէս ez) [illegible] (միծյեւ ժէս ժեktr) [illegible]
[illegible] 157



ՆԻՈՒ—ՀՕՄ
NEW HOME
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Բարիզի 1900ի արուեստահանդէսին ու 1894ի Անվէրսի արուեստահանդէսին մէջ անմրցելի յաջողութիւն մը գտած են ամերիկեան Նիու-Հօմ կարի մեքենաները, որոնք թեթեւ, տոկուն ու արագ ըլլալով, ամէն տան համար անհրաժեշտ են։ Նաեւ կը ծախուին ընտանիքներու եւ արհեստանոցներու համար պէտք եղած գուլպայի եւ ֆանէլայի ձեռքով ու ոտքով մեքենաներ։ Դասերը ու նորոգութիւնները ձրի են։ Թէ՛ կանխիկ եւ թէ ապառիկ վաճառումներ կը կատարուին, մասնակի վճարումներով։

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ ԱՄԱՏԷՕ ՍԱԼՎԱԹՕՐ
ԸՆԴՀ. ՄԹԵՐԱՆՈՑ.—Պոլիս, Պահճէգափու, Համիտիէ Ճատտէսի թիւ 7
ՄԱՍՆԱՃԻՒՂ.—Իզմիտ, Ռոտոսթօ, Աֆիոն-Գարահիսար, Սիլիվրի եւն. 578

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ
[illegible]
[illegible]

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
[illegible]	1052	[illegible]	1497	[illegible]	1011	[illegible]	724	[illegible]	[illegible]
[illegible]	3807	[illegible]	2906	[illegible]	1695	[illegible]	2273	[illegible]	1112
[illegible]	1541	[illegible]	595	[illegible]	775	[illegible]	2709	[illegible]	1785
[illegible]	3877	[illegible]	4311	[illegible]	1521	[illegible]	3557	[illegible]	[illegible]
[illegible]	1832	[illegible]	937	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	1735	[illegible]	[illegible]
[illegible]	1076	[illegible]	1718	[illegible]	595	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	841	[illegible]	504	[illegible]	[illegible]	[illegible]	1882	[illegible]	[illegible]
[illegible]	4421	[illegible]	2464	[illegible]	5540	[illegible]	1109	[illegible]	1478
[illegible]	1671	[illegible]	1520	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	1387	[illegible]	1341	[illegible]	1052	[illegible]	1585	[illegible]	[illegible]
[illegible]	1244	[illegible]	954	[illegible]	2807	[illegible]	1887	[illegible]	1914
[illegible]	1994	[illegible]	1328	[illegible]	1709	[illegible]	518	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	849	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	4582	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	3697	[illegible]	3060	[illegible]	1643	[illegible]	1613	[illegible]	[illegible]
[illegible]	4285	[illegible]	1245	Լօրէնցօ	3191	[illegible]	1789		

Լօրէնցօ շոգենաւը, Նաւապետ Ուիլք, ընդհանուր վաճառքով Հալէպ հոս հասած է։
[illegible]
[illegible]

COMP RUSSE
NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE
ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
[illegible]
25 7 [illegible]
26 8 [illegible] 10ին [illegible]
27 9 [illegible] 10ին [illegible]
27 9 [illegible]
28 10 [illegible]

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ [illegible]
Ն. ՓԱՔԷ ԵՒ ԸՆԿ.
[illegible]
Ցունվ. 14ին Սիռֆասի, Մարսիլիայէն,
» 20ին Մինկրէլի, Անատոլուի [illegible]
[illegible]
Ցունվ. 15ին Սիռֆասի, Սամսոն, Տրապիզոն եւ Պաթում,
» 21ին Մինկրէլի, ուղ. Մարսիլիա,
[illegible]
175 ֆրանք. [illegible]
[illegible]

[illegible] ԼԷՅՆԷՔԷՆ ԵՒ ԸՆԿ.
ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
[illegible]

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
[illegible]	10500	[illegible]	[illegible]
[illegible]	10500	[illegible]	[illegible]
[illegible]	10500	[illegible]	[illegible]
[illegible]	9000	[illegible]	[illegible]
[illegible]	9000	[illegible]	[illegible]
[illegible]	8000	[illegible]	[illegible]
[illegible]	8000	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]
[illegible]	8700	[illegible]	[illegible]
[illegible]	8700	[illegible]	[illegible]
[illegible]	8700	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]		

[illegible] 24 [illegible]
[illegible]
Ղալաթիա, [illegible]
490 [illegible]

— 35 —

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԲԱՐԵՍԻՐՏՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԺԳ.

ԲԱՐԵԿԱՄ

Կ'ըսուի նաեւ հաճութեան միեւնոյն զգացումով թէ պէտք է խոհեմօրէն վարուիլ բարեկամներու հետ, չվստահիլ ինքզինքը ու զգուշանալ անոնց վրայ չափազանց մեծ վստահութիւն դնելէ։

Տարակոյս չունիմ որ անզուսպ փափաք մը զգացիք գոչելու թէ բոլոր այս բաներէն ո՛չ մէկը կը վայլէ բարեկամութեան. ես ալ ճիշդ ա՛յդ կէտին կ'ուզէի անդրադառնալ։

Եթէ այն եսասիրութիւնը, այն հաշիւները, այն իմաստութիւնը ու այն խոհամանկութիւններն ի գործ կը դրուին մեր բարեկամներուն հանդէպ, պատճառն այն է որ բարեկամութիւնը իմաստազուրկ բառ մըն է կամ դատարկ հնչիւն մը։ Ըսե՛նք անկեղծօրէն թէ կը դադրինք բարեկամ ըլլալէ՝ երբ կը դադրինք երիտասարդ ըլլալէ. թէ մեզմէ դուրս ոչինչ ալ եւ շահեկանութիւն կ'ընծայէ, եւ թէ պատշաճ է գեղեցիկ զգացումները վտարել աւանդավէպի սահմանին կամ ցնորքներու երկրին մէջ։

Ի՛նչպէս, դրամ փոխ չէք տար մարդու մը՝ վասն զի ձեր բարեկամն է։ Բայց որո՞ւ փոխ պիտի տաք ուրեմն։ Որո՞ւ պիտի վստահիք ուրեմն՝ եթէ ոչ անոր։ Անցորդի մը համար կրնան ոչինչ ընել, ո՛չ ջանք, ո՛չ ալ զոհողութիւն, վասն զի կ'անցնի, վասն զի չի գիտցուիր թէ ուրկէ՛ կուգայ կամ ո՛ւր կերթայ, ուստի եւ կը փափաքիմ ընդունիլ այս կէտը, բայց այդ պարագային մէջ ի՞նչ տարբերութիւն կը մնայ ալ ես այդ անցորդին ու մեր բարեկամին միջեւ։ Գիտեմ թէ ի՛նչ պիտի պատասխանեն իմաստուններ. «Ամենէն լաւն է այն է որ մարդ բնաւ դրամ փոխ չտայ մէկուն ու միմիայն իր անձին վստահի»։ Շա՛տ լաւ, բայց այս պարագային մէջ, պարոններ, տրամաբանօրէն ու մանաւանդ անկեղծօրէն դատեցէք. խոստովանեցէ՛ք թէ ձեզ հաճելի թուած է ուրիշներուն հետ հաղորդակցիլ բարեբաստիկ օրերու մէջ միայն, ու մի՛ ըսէք թէ բարեկամներ ունիք։ Եթէ այս բարեկամները լոկ կը յարմարին ծառայելու ձեր սնափառութիւններուն ու ձեր պճնուած կիրքերուն, մասնակից ըլլալու ձեր հաճոյքներուն, երեւակի (comparse) դեր կատարելու ա՛յն կատակախաղերուն մէջ՝ զորս շարունակ կը ներկայացնէք ի նպաստ ձեր, եթէ չէք ուզեր ո՛չ օժանդակել անոնց ո՛չ ալ պաշտպանել զանոնք, եթէ չէք գիտեր ճանչնալ ա՛նոնց արժանիքն ու վայելել անոնց գերազանցութիւնը, ձեր անձին միայն բարեկամ էք։ Բարեկամութիւնը ինչ կ'ենթադրէ, արդ՝ որովհետեւ դուք զձեզ միայն կը սիրէք. ի՞նչ հարկ կայ ստելու եւ հաւատցնելու թէ կը սիրէք ուրիշները։

Բարեկամութիւնն այսպէս ի գործ դընող մարդոց երդումներն ի՛նչ արժէք պիտի ունենային, եթէ բարեկամի մը ընտրութիւնը կրօնական արարողութեան մը կարգն անցած ըլլար մեր մէջ։ Բորթալիս կը տեղեկացնէ մեզ թէ, արեւելեան Եւրոպայի ալ ազգերուն մէջ, բարեկամութիւնը հանդիսաւոր յանձնառութիւն մըն է, որ կը կնքուի խորաններու առջեւ։ Սլաւական ծիսագրքին մէջ, կը գտնուի աղօթքի բանաձեւ մը համախմբուած ժողովուրդին առջեւ օրհնելու համար երկու բարեկամներու կամ երկու բարեկամուհիներու միութիւնը։ Այս զոյգերը պարտաւորութիւն կը ստանձնեն փոխադարձաբար ձեռնտու ըլլալ ամէն տեսակ պէտքերու ինչպէս եւ ամէն տեսակ վտանգներու մէջ։ Այս կապակցութիւններուն խզումը հազուադէպ է. այնպէս որ հանրային գայթակղութիւն մը կը պատճառէ մէջ։

Կը խոստովանիմ թէ անկաշկանդ զգացումները մեծապէս հաճելի են ինծի, նախադասելի է զինքը սիրել՝ առանց այս մասին հանդիսաւորապէս պարտաւորութիւն ստանձնելու։ Բայց հետաքրքիր էր գիտնալ թէ մեր բարեկամի թեթեւազգաց սրտերէն ո՛րքանը պիտի արժանանային օրէնքէն զսպուելու, նոյն իսկ եթէ այդ օրէնքը տրամադրութիւն մը ունենար։

Բարեկամութիւն բառը մէկն է ա՛յն բառերէն՝ զորս մարդիկ սովորաբար չափազանց գործածած են. ա՛յս իսկ է որ զուարճաբանօրէն ըսել տուած է թէ երբեք տեսակ բարեկամ ունինք աշխարհի մէջ, մեր ա՛յն բարեկամները՝ որոնք փոյթ չեն ըներ մեր վրայով, ու մեր ա՛յն բարեկամները՝ որոնք կ'ատեն զմեզ։

Պէտք է լաւ ճանչնալ թէ ամենէն ստուարաթիւ դասակարգը կը կազմեն ա՛յն բարեկամները՝ որ՝ գրեթէ փոյթ չեն ըներ մեր վրայով։ Սովորաբար ասոնք եղած են մեր պատանեկութեան աշակերտակիցները, երբեմն անոնք մեզ հետ ապրած են ամենէն սերտ մտերմութեամբ, բայց բոլոր այդ բաները թեթեւ հետք մը միայն թողած են անոնց հոգիին մէջ։ Դուք բաւական ուղղակի ազդակներ չէք կրնար ըլլալ անոնց պէտքերուն, անոնց շահերուն, դուք չէք կրնար ծանրակշռել անոնց գործունէութեան շրջանակին մէջ, ուստի եւ անոնք ալ ես ժամանակ չունին զձեզ սիրելու։

Արդ՝ պէտք է հակազդել այս անփութութեան դէմ, պէտք է դարձի բերել այս մոռացկոտները։ Անոնց պաշտած բանը համարժէք չէ անոնց ունեցած բաներն. ա՛յն բերկրանքները՝ որոնցմէ կը հրաժարին, ճշմարիտ բերկրանքներ են մանաւանդ, վասն զի ասոնք պահ մը զմեզ կ'անջատեն մեր անձէն ու պարտականութեան օրէնքին կ'ենթարկեն զմեզ։

Այն բարիքը՝ զոր մարդ մարդու չըներ կամ չուզեր ընել, բարեկամը պարտի ընել իր բարեկամին։ Մեզ աննպաստ եղող ամենէն մեծագոյն ամբաստանութիւնն է ա՛յն անտարբերութիւնը՝ զոր ցոյց կուտանք հանդէպ անո՛նց՝ զորս կը ճանչնանք, զորս կը գնահատենք, զորս կը յաւակնինք սիրել վերջապէս։

Մարդիկ ընկերային կեանք կը վարեն՝ փոխադարձաբար բարւոքելու համար իրենց նկարագիրը. առաջին բարիքը՝ զոր կը պարտին իրարու, ճշմարտութիւնն է։ Զիրար ըստ բաւականի սիրած չեն ըլլար, եթէ բնաւ չեն աշխատիր իրենց փոխադարձ կատարելագործումին։ Բարեկամը երկրորդ գիտակցութիւն մըն է. խոհական, զգուշաւոր, գաղտնապահ, հնարագէտ ըլլանք ի հարկին, բայց անկեղծ ըլլանք միշտ։ Կանխաւ չազդարարել բարեկամի մ'որ կը մոլորի կամ դէպ ի կորուստ կը դիմէ, զինքը չկորզել ա՛յն անկարգութիւններէն՝ որոնց ենթակայ եղած է ստրկօրէն, կը նշանակէ թերանալ բարեկամական պարտականութիւններէն ամենէն կարեւորին, ամենէն նուիրականին մէջ։ Կան ինչ ինչ թոյներ՝ որո՛նք կը վիրաւորեն, բայց կը բուժեն. այս թոյնէն նախընտրելի չհամարի՛նք մեկոնը, որ կը քնացնէ ու կը սպանէ։ Շատ լաւ ըսած է Մ. տը Լամբէնա. «Մարդ թուլակի կը սիրէ ա՛յն անձը, որուն՝ չպիտի հաւանէր բարկութեան ենթարկել ինքզինքը, զայն սխալէ մը կամ վտանգէ մը նախազգուշացնելու համար»։

Մեզ անծանօթ եղողներուն օգնելու համար, գրեթէ միշտ դրա՛մ պէտք է. բայց ամէն պարագայի մէջ շատ նախազգուշութիւն, շատ խոհեմութիւն պէտք է. այնչափ քի՛չ բան կը բաւէ բարեկամ մը հաշտեցնելու համար։

Բարեկամական յարաբերութիւններ մշակելու համար, ի՛նչ բան աւելի սիրելի է՝ քան թէ ա՛յն ազնիւ հնարքները, ա՛յն բարենպատակ խորհուրդներն ու բարեդէպ առիթով մատուցուած ծառայութիւնները։ Արդէն իսկ ա՛յնչափ քաղցր է պատճառելի հաճոյքին մտածումը։ Եթէ լրջախոհ մարդիկ տեսակ մը արհամարհանքով մեզ ըսեն թէ մեր հոգածութիւնները, մեր կանխահաճութիւնները մտերմութեան հետեւանք են, չվհատի՛նք. այս յանդիմանութիւնը նախատինք մը չէ բնաւ. երանի՛ անոր, որ՝ սրտի հայեցակէտով՝ տղայ մնացած է։

(Շարունակելի)